891.99
Բ-37

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

ԱՌԱԿ

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ

70792
165974

ԹԻՖԼԻՍ
Յ. Մարտիրոսեանցի տպարան
ՍՐԲԵԼԵՆՆ ՓՈՂՈՑ, № 1/2
1889

3Բ

891.99 2072
Е-37 Емиркин-Кесаев
Е-174 Ко-ка
19/XII 13
41 26/VIII 61

Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2

12725

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

ՆԱԽԵՐԳԱՆՔ։

Երբ ծերերը առ հասարակ
Գովում են հին ժամանակը,
Ասում են, թէ փոխուեց աշխարհք,
Ապականուել են մարդիկը։
Չկայ այժմ ճշմարտութիւն,
Թագաւորում է ստութիւն,
Հաւատ, յոյս, սէր էլ մի հարցնի
Այժմ ապրող սերնդիցը,
Ասում են, թէ շատ չի անցնի,
Կրակ կըթափուի երկնքիցը,
Կամ ջրհեղեղ կը պատահի,
Էլ հեռու չէ վերջն աշխարհի։

Ողորմութիւն, պատարագ, ժամ
Այժմ աւելորդ համարվում են,
Աղօթք անել մինչև անգամ
Պարզիկ, կարծես, ամաչում են.
Փոփոխել են ծոմն ու պասը,
Նոցա վնաս է լօրէպասը.
Այդ պատճառով էլ մեզ վրայ
Տէր Աստուածը բարկացել է,
Մեր կերակուրն ամենօրեայ
Հացն ամեն տեղ թանկացել է։
Մէկ տեղ կարկուտ, միւս տեղ հեղեղ,
Երաշտութիւն, մուկն ու մորեխ.
Գետինն անգամ մեր ոտի տակ
Էլ հաստատ չէ, տատանում է,
Այստեղ մի գիւղ, այնտեղ քաղաք
Երկրաշարժը կործանում է։
Ապահով չենք մի օր, մի ժամ.
Խօլեր, ժանտախտ, մահ տարաժամ
Էլ չեն խնայում մեծ ու փոքրին.
Էլ ո՞րն ասենք, ո՞րը պատմենք,
Ի՞նչ վայ տանք մեր թշուառ օրին,
Մեզ ճար չկայ, կորած ենք մենք։
Պարզիկ միմեանց էլ չեն խղճում,
Սրով, կրակով միմեանց ջնջում,

Երկնքումն էլ ամեն տեսակ
Երևում են վատ նշաններ,
Կամ խաւարում է արեգակ.
Կամ ծագում են պոչով աստղեր:
Մի խօսքով շատ վատ է բանը,
Մօտ է ահեղ դատաստանը:...

Այսպէս, կամ թէ տրա նման
Ծերերը շատ բան են ասում,
Հին ժամանակը ափսոսում,
Նորը համարում անպիտան.
Թէպէտ յայտնի է պատճառը,
Բայց չեմ ասում, որ իմ ճառը
Զափիցը դուրս չերկարանայ,
Եւ կարդացողը ձանձրանայ:
Ես չեմ ուզում մին մին հերքել
Մեր ծերերի գանգատները,
Ոչ միտք ունիմ տագեր երգել,
Գովելով մեր արատները:
Ոչ, այդ չէ իմ նպատակը:
Եւ ինչ օգուտ զուր աշխատել,
Ապացոյցներով հաստատել,
Որ հիմիկուայ ժամանակը

Հնից նիթէ լաւ չէ, վատ չէ.
Կրկնում եմ, որ ուզածս այդ չէ։
Թէպէտ, ինչպէս Հին ժամանակ,
Այժմ էլ շատ կան խոտաճարակ
Բարեպաշտներ, որոնք ժամից
Իրանց օրում չեռ չեն մնում,
Ինչպէս թռչքը խոզի մսից,
Պաս օրերին պանրից փախչում,
Հրապարակումն են ոդոմած,
Բազմութեան մէջ, եկեղեցում
«Փեղա» կանչում, կուրծքը ծեծում,
Պոցա Համար էր, որ ասաց
Տէրը. «այն խակ են վարձք նոցա»։
Բայց չեմ ուզում դիպչել դոցա,
Այլ ուզում եմ ես ձեզ պատմել
Մի պատմութիւն, ոչ առասպել,
Որ լսել եմ այս օրերում
Իմ մի շատ լաւ բարեկամից,
Եւ դուր կրգայ, չեմ կասկածում,
Ձեզ էլ, ինչպէս դուր եկաւ ինձ։

Ա.

Յն ժամանակ մի քաղաքում
Ապրում էր մի վաճառական,
Որ մի անգամ Հաբանիքում
Տեսաւ դրացու սիրուն աղջկան։
—Այն ժամանակ Հիմիկուայ պէս
Չկար կլուբ, թատրոն, կրկէս,
Ինչտեղ աղջիկն ու տղան իրար
Ունենային տեսնելու հնար.
Այն ժամանակ միայն այդ տեսակ
Ընտանեկան հանդէսներում
Տեսնվում էին արք և կանայք,
Կամ թէ ուխտատեղիներում։

Բայց այդ յայտնի է ամենքին,
Այժմ էլ յատուկ արևելքին.
Դորա վերայ շատ չկանգնենք
Եւ մեր խօսքը շարունակենք։

Օրիորդը այն հանդիսին
Տալիս էր մի առանձին փայլ,
Ինչպէս տան հինգ օրուայ լուսին
Պարզ երկնքին աստեղափայլ։
Գեղեցիկ էր նորահարսը,
Կային նոյնպէս նորա տարրը
Սիրուն կանայք և աղջիկներ,
Բայց ամենքից նա նազիկն էր։
Բոլոր հիւրերը հիացան
Նորա գեղով չնաշխարհիկ.
Խոստովանելով միաձայն,
Թէ նա բնութեան է հրաշալիք։
Բայց երբ պարը ըսկսուեցաւ,
Եւ հարսից յետո հերթը անցաւ
Գեղեցկուհուն մեր աննման,
Էլ հիացման չկար սահման։
Նորա ոտը փոքրիկ, քնքոյշ,
Կարծես դիպչում չէր յատակին,

Նա սահում էր թեթև, անոյշ
Նման անմարմին մի հրեշտակին.
Մէկ սլանում էր նա արագ,
Եւ մէկ թեքում մէջքը բարակ,
Յանկարծ կանգնում ու օրօրվում,
Ապա նորից թեւաւորվում։
«Պաչեմ, աղջի, թշիկ վարդը»,
Մտածում էին շատերը.
«Գերերջանիկ է այն մարդը,
Ում կընծայես դու քո սէրը»։
Պարն աւարտեց մեր սիրունը,
Ընկերուհուն գլխով արեց.
Յափշտակուած բազմութիւնը
Ցնծաց, անվերջ ծափահարեց։

Վաճառականը կանգնած էր,
Կրկարծէիր կախարդած էր։
Սիրոյ փոքրիկ աստուածիկը,
Այն խորամանկ նետաձիգը,
Որ կոչվում է Էրոս, Ամուր
—Նորան ծնաւ Աֆրոդիտը—
Զգել էր իւր աղեղն ամուր
Եւ խոր խոցել նորա սիրտը։

Այնուհետև քնած, արթուն
Խեղճը չունէր հանգստութիւն.
Մուացաւ իւր բան ու գործը,
Միշտ չափում էր այն փողոցը,
Ուր բնակում էր իւր սիրելին,
Աշխատում էր մի հնարքով
Արժանանալ նորա տեսին,
Եւ երջանիկ, ուրախ հոգով
Երեկոյեան գառնալ իւր տուն,
Եւ լուացնել գրէ թէ անքուն,
Որ միւս օրը էլի կրկնէր,
Ինչ որ երեկ նա արել էր....

Ծանրաբարոյ և գործի տէր
Պարզուն անշուշտ է անվայել,
Պարապ սարսափ ամրողջ օրեր
Փողոցներումը թափառել:
Բայց սէրն ում չէ յիմարացրել,
Ո՞վ չէ նրանից խելքը կորցրել,
Ո՞վ է այնքան տէր կրքերին,
Որ գիմնայ նրա հրապոյրներին:
Թէ պատանուն գիւրագրգիռ,
Թէ ծերունու սրտին թառմած

Նորա նետերը անխտիր
Միշտ տուել են քնքոյշ հարուած։
Ստուածները մինչև անգամ
Հնազանդուել են յօժարակամ
Սիրոյ կամքին և հաճոյքին,
Դարաւելով նրա վայելքին։
Ուրեմն մի՛ դատիր դու խիստ,
Ով ընթերցող, իմ հերոսին,
Եթէ քո սիրտն է դեռ հանգիստ
Եւ դեռ նուիրուած չէ Էրոսին։
Հաւատա՛ ինձ, որ եթէ քեզ
Հանգիստէր կոյս մի նորա պէս,
Նորա միակ քաղցր հայեացքին
Կըզոհէիր կեանքդ անգին։

Եւ իրաւ, որ այնպէս քնքոյշ,
Գեղեցիկ էր այն աղջիկը,
Այնքան չքնաղ, այնքան անոյշ
Էր բոլոր նորա անձնիկը,
Որ տեսնողը հիանում էր,
Խելքը գլխիցը գնում էր։
Հասակը բարձր, մէջքը բարակ,
Արմաւենին ձեզ օրինակ,

Կրակով վառուած սև աչքերը
Երջանկութիւն էին խոստանում,
Նորաբաց վարդ շրթունքները,
Կարծես Համբոյր էին խնդրում։
Բայց իմ գրիչը շատ տկար է,
Որ սիրունին ճիշտ նկարէ։
Նորա գեղեցկութեան վայել
Վրձին ունէր միայն Ռաֆայէլ։
Իսկ ես երգիչս անանշան
Ի՞նչպէս պիտի վստահանամ
Լինել նորա պատկերահան։
Որովհետև, որքան ոյժ տամ
Գրչիս, գիտեմ, որ չեմ կարող
Նրան արժանի հիւսել ներբող։
Միայն կասեմ, որ Սատղիկը
—Այսպէս էր կոչվում աղջիկը—
Համարվում էր իւր սեռի զարդ,
Նրան հաւասար պաշտում էին
Թէ ծեր և թէ երիտասարդ.
Բայց դառնանք մեր սիրահարին։

Գիշեր ցերեկ «ախ» ու «վախով»
Նա անցկացրեց ամբողջ տարին,

Բայց վերջը էլ չտանելով
Սիրոյ սաստիկ տանջանքներին,
Մի օր վճռեց մարդ ուղարկել
Աղջկայ հօր մօտ, առաջարկել,
Որ գեղեցիկ իւր Աստղկին
Համաձայնի տալ իրան կին։
Ի՛նչպէս խնդաց, ի՛նչպէս ցնծաց
Սիրտը մեր խեղճ սիրահարի,
Երբ յետ դարձաւ նրա ուղարկած
Մարդն և բերեց համբաւ բարի։
Աղջկայ հայրը նորա բերնով
Ապսպրում էր, թէ նա սիրով
Համաձայն է իւր Աստղկին
Տալ պատուական իւր դրացուն կին,
Միայն առաջ կըխօսի նա
Այդ մասին իւր աղջկայ հետ,
Եւ ինչ պատասխան որ ստանայ,
Կըհաղորդէ միւս օրն և եթ։

Ընթերցողը չզարմանայ
Ամենևին այս բանի վրայ,
Որ ծերունին միջի մարդուն
«Այո՛», կամ «ո՛չ» չասաց իսկոյն։

Թէպէտ հին անցք եմ պատմում ես,
Գովաբանած հին օրերից,
Երբ որ գաւակը ստրկի պէս
Զէր շեղվում իւր ծնողի կամքից,
Երբ որ հնազանդ հօրն ու մօրը,
Հարսն ու փեսան պատկի օրը
Ցեսնում էին իրար դէմքը.
Բայց և այնպէս նոցա շէմքը,
Զէր կոխում նենգ հրապուրիչը,
Տանն իշխում էր փոխադարձ սէր,
Զէին խաղում քոծն ու բիջը
Ընտանիքում առանձին դեր:

Այն ինչ հիմա, մեր օրերում,
Մեր լուսաւոր կոչուած դարում
Աղջիկն ու տղան վաղուց արդէն
Մէկ մէկու հետ լաւ ծանօթ են:
Կլուբների դահլիճներում
Պօլկան, վալսը ու մազուրկան,
Իրար գրկած թեթև պարում,
Այլ և երբեմն լեզգինկան.
Նոքա կարդում են միասին,
Զրոսնում, երբ որ փայլում լուսին,

Որ վերևից լռիկ, մնջիկ
Ջատ է տեսել նոցա պաչիկ։
Այսպէս ահա ազջիկն ու տղան
Ճաշակում են սիրոյ ծուծը.
Եւ ապա թէ ամուսնական
Ընդունում են ծանր լուծը.
Բայց չէ անցնում և վեց ամիս,
Արդէն ուտում են իրար միս.
Պարդն ուրիշ կնոջն է սիրահար,
Կինն էլ նորան շինում արջառ։
Սակայն պէտք է խոստովանիմ,
Բոլորն էլ չեն նոցա նման,
Քանի մի զոյգ հաւատարիմ
Ամուսիններ հիմա էլ կան։

Գուցէ շատերն այս խօսքերից
Իմ մասին թիւր կարծիք կազմեն,
Խաւարապաշտ համարեն ինձ
Եւ հնամոլ ինձ անուանեն։
Հաւատացէք, որ ես հնին
Ջատագով չեմ ամենևին,
Եւ անպայման էլ չեմ կարող
Նորին լինել պախարակող։

Ինչպէս հինը, նոյնպէս նորը
Լաւ, վատ կողմեր ունին անթիւ.
Թէ նոցանից արդեօք ո՞րը
Պիտ՝ համարենք նախապատիւ,
Ես այդ հարցին ծանրակշիռ
Հրաժարվում եմ տալ իմ վճիռ,
Այլ թողնում եմ ամեն մէկին
Ընտրել յարմարն իւր ճաշակին։
Ձեմ ասում, թէ երիտասարդ
Պարդիկ իրար հետ չպարեն,
Ծաղկափթիթ, մատաղ ու գուարթ
Հասակում փակ կեանք պիտ՝ վարեն.
Ո՛չ, այլ կասեմ. աղջիկն ու տղան
Դիւրաբորբոք նիւթերի նման
Պէտք է խնամով և զգոյշ պահուին,
Որ մի գուցէ յանկարծ վառուին։

Վերն ասացի, թէ ծերուկը,
Հակառակ հին սովորութեան,
Կամեցաւ, որ Աստղիկն ինքը
Վճռէ հարցն իւր ամուսնութեան։
Որովհետև գիտեմ, պիտի
Ձատերին թուի օտարոտի,

Որ ծերունին իր աղջկան
Իրաւունք է տալիս այդքան,
Ուզում էի այդ Հասարակ
Երևոյթը կարճ բացատրել,
Բայց սկսեցի երկար բարակ
Հին ու նորի վերայ ճառել։
Յանցաւոր եմ. բայց ինչ արած,
Անշուշտ լսել էք այս առած.
«Երբ աշուղի խաղը պակսի,
Նէյնիմ նէյնիմը կրսկսի»։

Երբեմն ինձ էլ է պատահում
Լինել այդ նեղ դրութեան մէջ,
Սկզբում խօսքս թեթև սահում,
Կատարելով լաւ ել և էջ,
Եւ խրախուսուած յաջող սկզբից,
Մխիթարում եմ ինքս ինձ,
Թէ կրգրեմ այնպիսի բան,
Որ ամենքը կրհիանան։
Բայց դեռ մէջ տեղը չհասած,
Յանկարծ ցրվում են մտքերս,
Եւ յուսահատ տեղս նստած
Կրծում եմ միայն եղունգներս։

Գրում, ջնջում, նորից սկսում,
Ձեռս ճակատիս եմ քսում,
Գինի խմում, ծխում գլանակ,
Փորձում այս ու այն եզանակ.
Սակայն ի զուր չարչարվում եմ,
Էլ առաջ չէ գնում գործը,
Եւ վերջապէս հրաժարվում եմ
Ձարունակել ունայն փորձը։
Վախենում եմ նոյն վիճակը
Ունենայ և այս առակը,
Որպա համար լաւ է կրկին
Դառնամ ծերին ու Ստոգկին։

Ուրեմն, ինչպէս յայտնի է ձեզ,
Ծերը գրացու առաջարկին
Պատասխանեց, թէ նախապէս
Կըհարցնէ իւր Ստոգկին.
Թէ իւր կողմից արգելք չկայ,
Միայն թէ նա իւր աղջկայ
Ազատ կամքին է թողնելու,
Իւր վիճակը որոշելու։
Թէպէտ ծերը ճանաչում և
Հաւանում էր իւր գրացուն,

Եւ յարգում էր նորան իրեւ
Իւր պատուարժան քաղաքացուն,
Որ Հարուստ էր, ժիր և արի,
Բարքով Համեստ, սրտով բարի,
Տեսքը գրաւիչ և գուրեկան,
Ինքն էլ երտուն հինգ տարեկան.
—Ո՞վ ինձ հետ չի համաձայնի,
Եթէ մարդ է օրինաւոր,
Որ պարոնը բատ ամենայնի
Փեսացու էր արժանաւոր—
Բայց և այնպէս մեր ծերունին
Հարցը թողեց աղջկայ վճռին,
Թէև լաւ գիտէր, ի Հարկ է,
Ստոդիկն իւր կամքը կը յարգէ։

Ես չեմ ուզում մեր ծերուկին
Ներկայացնել ազատամիտ.
Բառն այս յայտնի չէր ոչոքին
Նրա օրերում բիրտ ու կոպիտ,
Գա ծնունդ է մեր ժամանակի,
Սիրած բառ մեն մի Համբակի,
Որով յայտնած գաղափարը
Յափշտակել է մեր գարը։

Գաղափարը, գիտէք դուք էլ,
Շատ վսեմ է, ազնիւ, բարի.
Դա պատուիրում է մեզ յարգել
Իրաւունքը մեր ընկերի։
Բայց ինչպէս շատ ճշմարտութիւն
Աղաւաղել է մարդկութիւն,
Ազատամիտ բառն էլ նոյնպէս
Հասկանում են մարդիկ պէս պէս։

Մէկը հերքում է ամեն բան,
Ինչ որ դարերով սրբուած է,
Հայհոյում է սորան, նորան,
Թէև ինքը մրոտած է։
Ուրիշի ինչքն յափշտակողն,
Հրապարակով անառակողն,
Իւր ամուսնուն խաբող կինը,
Գուրսը շնացող ամուսինը,
Անհնազանդ և վատնող որդին,
Ծոյլ և յանդուգն աշակերտը,
Ապտակողը վարժապետին,
Գրչավաճառ լրագրապետը,
Ժողովուրդի հովիւն արթուն,
Որ յաճախում է գինետուն,

Ծպտեալ կերպով, incognito,
Հագնուած իբրև լօթի, կինտօ,
Նաև ըմբոստ Հաստագլուխը
Եւ այլ դոցա նման մարդիկ,
—Ստուած մարէ նոցա ծուխը—
Եթէ Հարցնես նոցա կարծիք,
«Զի յԱստուծոյ ոչ երկնչին,
Ի մարդկանէ ոչ ամաչին.»
Կասեն, թէ մենք ենք պարզամիտ,
Իսկ իրանք են ազատամիտ։

Ուրեմն, ինչպէս ասացի ես,
Ազատամիտ չէր մեր ծերը,
Թէև վարվում էր նա այդպէս,
Բայց պատճառն էր աղջկայ սէրը։
Դուք լաւ գիտէք. առ Հասարակ
Երբ ծնողն ունի միակ զաւակ,
Այն ժամանակ ոչ թէ ծնողը,
Այլ զաւակն է տանն իշխողը։
Իբրև միակ զաւակ իւր Հօր,
Նորա միակ ուրախութիւն,
Մեր Աստղիկը ճշմարիտ որ
Հօր վրայ ունէր ազդեցութիւն։

Նորա ամեն մի հաճոյքը
Միշտ կատարում էր ծերուկը,
Վախենալով, որ մի գուցէ
Քնքոյշ աղջկայ սիրտը խռցէ։
Անբնական ոչինչ չկայ
Այստեղ և պէտք չէ զարմանալ,
Եթէ ծերը իւր աղջկայ
Ուզեց նախ կամքը իմանալ
Եւ համաձայն նրա ցանկութեան
Վճռել հարցը ամուսնութեան։—
Բայց բաւական է, վերջացնեմ
Այս գլուխը և նորին անցնեմ,
Թէ չէ կասէ ընթերցողը.
«Քաղ երկար է և անհեթեթ».
Ես էլ գրում եմ վերջին տողը
Ահա և դնում եմ վերջակետ։

Բ.

Բարկեշտասուն, համեստափայլ
Օրիորդներ ու տիկիններ,
Ազնիւ, խոհեմ, գիտուն և այլ
Լաւ յատկութեան տէր պարոններ,
Թուք ամենքդ, որոնք արժան
Դատէք կարդալ այս գրուածքը,
Մի՛ ենթարկէք խիստ քննութեան
Սորա ոճը ու հիւսուածքը։
Արևն անգամ չէ անարատ,
Նորա վրայ էլ բծեր կան շատ։
Մահկանացուն այս աշխարհում
Միշտ եղել է մեղանչական,

Բացի Պապից, որ նորերում
Հռչակուեցաւ անսխալական։
Բայց երևի, թէ սուրբ Հայրը
Մոռացել է Փրկչի խրատը,
Որ ասում էր, թէ եղբայրը
Չկատարէ եղբոր դատը։
«Չի տեսանես գշիւղ յական
Եղբոր քո և ի քում ական
Զգերանդ ոչ տեսանես»։
Ահա Տիրոջ բուն խօսքերը,
Որ յիշեցնում եմ նորան ես
Եւ լուանում իմ ձեռները։
Ուրեմն, ազնիւ ընթերցողներ,
Խնդրում եմ ինձ խիստ չդատէք,
Եթէ տեղ տեղ անհարթ տողեր
Գրուածքիս մէջ կընկատէք։
Դորա համար մի լաւ խօսք կայ.
«Licentia poetica».

Բայց ինչի՞ ինձ այս բանն իզուր
Այսքան պիտ՝ անհանգստացնի,
Մինթէ առակս հազար ու բիւր
Մարդկանց ձեռը պիտի անցնի։

Յայտնի է, որ առ հասարակ
Հայ ազգը չէ ընթերցասէր,
Կարծես իզուր բազմավաստակ
Սուրբ Մեսրոպը հնարեց տառեր.
Գուտենբերգի գիւտից անմահ
Հայերը չեն քաղում շատ շահ։
Գիրք կարդալը դեռ մեզ համար
Պիտոյք դարձել չէ կենսական,
Թէև արդէն քանի մի դար
Ունինք մամուլ տպագրական։
Մենք լրագիրներ ունինք նոյնպէս,
Ամենօրեայ մինչև անգամ,
Բայց գալիս են նոքա հանդէս
Մի եօթնեկում երեք անգամ.
Օրագիրներ ունինք նաև,
Որը ծանր, որը թեթև,
Եւ դոցա հետ քանի մի հատ
Լոյս են տեսնում տարէնը գիրք,
Որոնց մէջը թէ քիչ, թէ շատ
Երևում են քանքար ու ձիրք։
Բայց ապրանքն այդ Հայի համար
Գին չունի և չէ պիտանի,
Լաւ է, թէ մի մանրավաճառ
Քաշով դնէ փաթաթանի։

Անմխիթար մի երևոյթ։
Այո։—Բայց այդ Հային չէ փոյթ։

Լուսաւորեալ կոչուած դասը
Հայերէն չէ կարդում երբէք,
Գրագ կրգամ մէկին տասը,
Եթէ ասածս կրհերքէք։
Եւ եթէ այդ ընտրեալներից
Եւ այնպիսի կան անհատներ,
Որոնք, ստիպուած լոկ պատշաճից,
Երբեմն առնում են հայ գրքեր,
Կամ ի պատիւ բարեկամին
Բաժանորդ են մի օրագրին,
Սակայն, գիտեմ, որ չեն կարդում,
Թերթերն անգամ չեն կտրատում։
Դարիս զաւակ, կրթուած Հային,
Հայ միտքը չէ հետաքրքրում,
Գրականութեանը ազգային
Ծանօթ չէ նա, չէ համակրում։
Եւ ինչ անունդ բարոյական
Մեր պարոնին intelligent
Կարող են տալ «Քնար Հայկական»,
«Կուսածաղիկ», «Նամուս» կամ «Խենթ»։

Ուրիշ բան են եւրոպական
Հեղինակներն անգուգական,
Վիկտոր Հիւգո, Զոլա, Պոդէ,
Ջէկսպիր, Բայրն, Ջիլլէր, Գէօտէ,
Որոնց անմահ գրուածները
Հիացնում են ընթերցողին,
Վսեմ ոճը, գարձուածները
Յափշտակում միտքն ու հոգին:
Այդ այդպէս է, և գորա դէմ
Ո՞վ կարող է ասել մի բան,
Միայն այս էլ հաստատ գիտեմ,
Որ ամենքն էլ չեն լեզուաբան
Լուսաւորեալ մեր Հայերը,
Եւ գմայլում են շատ շատերը
Երևմուտքի գրականութեամբ,
Ոչ Հայ, այլ ռուս թարգմանութեամբ:

Իսկ այն դասը, որ չէ առել,
Պարոցական կարգին ուսում,
Այր ժէ ճէ ռա է սովորել,
Միայն Հայերէն կարդում, խօսում.
Որ սկսել է իւր ուսումը
Երևելի Հեգարանից,

Ուր անդրանիկ երեսումը,
Ճակտին տպած է. «խաչ, օգնեա ինձ»:
Յետոյ սերտել է «Մի կանոն»,
Ուտելով շատ ճիպոտ, քանոն
Բազմահմուտ և բանիբուն
Իր խալիֆա վարժապետից,
Որին Հայրը, տալով որդուն,
Ասում էր. «քեզ միսն ոսկորն ինձ»:
Այնուհետև կարդացել է
Նա «Մեծ սաղմոս», կամ «Փամագիրք»,
Եւ բնութենից թէ ստացել է
Ունակութիւն, շնորհք ու ձիրք,
Նա իր ուսմանը քրտնաջան
Նարեկով է տուել վախճան:
Այդ դասն ահա, որին գրագէտ
Անունը միայն կարող եմ տալ,
Որովհետև է նա տգէտ,
Գիտէ միայն գրել, կարդալ,
Որի համար «Էֆիմէրդին»,
«Պղնձէ քաղաքի պատմութիւնն»,
Կամ թէ մի հին «կարարագին»
Շատ բարձր են, քան նոր դպրութիւնն,
Դա էլ գրուածքս չի կարդայ,
Դորա համար գրոշ չարժէ դա:

Փոքր մնաց մոռանալի
Իր խմբագիր պարոններին—
Ճշմարտութիւնն ուրանալի,
Չայրացնէի կամքը վերին,
Կարող էի յոյս ունենալ
Արժանանալ ներողութեան,
Բան երբ յանկարծ պատահէր տալ
Պարոններին մոռացութեան։
Ո՛հ, նոքա շատ ինքնասէր են,
Որովհետև գրչի տէր են։
Թէ իմացար դու գրաւել
Նոցա սէրն ու համակրանքը,
Որ շատ հեշտ է. ևս առաւել,
Երբոր նոցա փուտ ապրանքը—
Լրագիրը, գովես, ճարես
Բաժանորդներ քանի մի հատ,
—Թէև ողջ թերթը քրքրես,
Առողջ մտքեր չես գտնի շատ—
Ուսուցիչ ես, թէ դերասան,
Նկարիչ ես, թէ վիպասան
Քո վիճակը ապահով է.
Յօդուածներով ամբողջ մի շարք
Խմբագիրը քեզ կրգովէ,
Կը հիացնէ համայն աշխարհք,

Հռչակելով քեզ մի հանճար.
Բայց վայ է քեզ, թէ դու նորան
Թշնամացրիր, ամեն բան չար
Պատրաստ են նրա գրիչն ու բերան
Անխնայ թափել, խեղճ, քո գլխին:
Ի՞նչ առեմ նրան լաւ ասողին:
Մի թարգմանիչ, կամ հեղինակ,
Տալով իւր աշխատանքը,
Ուզարկում է մի օրինակ
Տէր խմբագրի ապարանքը,
Եւ յոյս ունի, որ կրկարդայ
Մի քննութիւն նորա թերթում,
Սակայն դորա փոխանակ նա
Հա՛, տե՛ս, թէ ինչ է կարդում.
«Ընդհակառութեամբ ըստացանք
Այս ինչ գիրքը, կինը չէ թանկ»:
Սրանից պէտք է եզրակացնել,
Որ մեծիմաստ խմբագիրը
Ամբողջ գիրքը չէ կարդացել,
Այլ միայն նորա վերնագիրը.
Կամ եթէ որ ընդհակառակ
Կարդացել է նա այն գիրքը
Աւելի ևս է խայտառակ,
Որ քննելու չունի ձիրքը:

Նայնն է վիճակն իմ առակի,
Ես էլ նորան չեմ ուզարկի։

Բայց կան մարդիկ, որոնք անշուշտ
Կըկարդան իմ այս առակը,
Որոնք վագրի պէս արիւնռուշտ
Կըզզգեն խեղճ տնտրակը,
Որոնք կըքննեն ամեն բառ,
Կըտուգեն ստորակէտները.
Վայ է, թէ սխալ գտնեն մի տառ,
Կամ մոռացած չակերտները։
Ինքա են Հայ կրիտիկոսներ—
Բարտիրոսներ, Կիրակոսներ։
Ահ, զգույշ կացէք, հեղինակներ,
Նոցա հետ մի անէք կատակ։
Ընամազդի պէս կայծակներ
Կարձակեն, թէ առիթ կրտաք.
Բարկացկոտ են նոքա սաստիկ,
Մի գնաք նոցա դուք հակառակ,
Չեն ճանաչում մեծ ու պստիկ,
Իսկոյն կանեն ձեզ խայտառակ։
Իսկեմ, ինձ էլ չկայ փրկութիւն,
Կըպատժեն իմ յանդգնութիւն։

Երբ քննում են նոքա մի գիրք,
Սկսում երկար նախաբանով,
Ճշմարտութիւնը, ոչ թէ կիրք,
Խօսում է նոցա բերանով.
Քարոզում են, թէ կրիտիկան
Սուրբ է, արդար և անաչառ,
Որ Հաշիւները անձնական
Երբէք պէտք չէ տան նրան պաշար.
Բայց վերջացաւ յառաջաբան,
Մնացածն լիշոց և ոչ այլ բան։
Թող Հայհոյեն, որքան կուզեն,
Այդ ինձ վոյթ չէ ամենևին,
Բիւր նախատինք վերաս դիզեն,
Ես չեմ ասի խելօք խևին։
Իմ Հաշիւը ես վաղօրօք
Արդ նոցա հետ վերջացնում եմ,
Այսուհետև ոչինչ բարդ
Չունիմ, այժմ ես անցնում եմ
Իմ ընդմիջած պատմութեանը,
Թէ չէ շատ է ձգվում բանը։

Արձակելով Հարանախօսին,
Հայրը կանչեց իւր աղջկան։

«Որդեակ», ասաց. «մեր դրացին,
Մի պատուական վաճառական,
Որ յայտնի է և անուանի,
Ոչ միայն մեծ հարստութեամբ,
Այլև վարքով առաքինի
Եւ իւր սրտի ազնուութեամբ,
Խնդրում է քո հարսնութիւնը.
Եւ դու գիտես իմ բնութիւնը,
Որ չեմ սիրում ես բռնանալ
Երբէք մարդու վերայ, թէպէտ,
Իրաւ է, քեզ ամուսնանալ
Խորհուրդ չտուի Վահանի հետ։
Աշխարհս է, որ նա կորիճ
Աշխատասէր մի տղայ է,
Բայց աղքատ է, չունի ոչինչ
Եւ ուրիշի մօտ ծառայ է։
Այդ պատճառով նա քեզ համար
Այր լինելու է անյարմար։
Երբ ես ինքս մի ժամանակ
Հարուստ էի և բաղդաւոր,
Առատութս էր յաջողակ,
Կեանքս շքեղ ու փառաւոր,
Ի՞նչ հարկաւոր էր որոնել
Ինձ քեզ համար հարուստ փեսայ,

Երբ ես ինքս ապահովել
Կարող էի գուսար ու փեսայ։
Բայց անցաւ այդ ժամանակը,
Այժմ այլ է իմ վիճակը։
Հանդիպեցայ ձախորդութեան,
Բարձրութենից վայր ընկայ,
Իմ ունեցած հարստութեան
Այժմ նշոյլն անգամ չկայ։
Ահա, ինչի ես, իբրև Հայը,
Տալիս եմ քեզ խորհուրդ բարի,
Որ, յոյս ունիմ, խոհեմաբար
Կընդունես, չես արհամարհի։
Դու, սովորած փափուկ կեանքին,
Չես դիմանայ աշխատանքին.
Այդ պատճառով քեզ ամուսին
Ունևոր մարդ պիտի ընտրես,
Որ դու ապրես նորա ձեռին,
Ինչպէս ապրել սովորած ես։
Որդեակ, խօսիր, անկեղծ ու բաց.
Յօժա՞ր ես մեր դրացուն ուզել,
Իսկ եթէ ոչ, միամիտ կաց,
Պատգիր չեմ ես քեզ տիպել»։

Օրիորդը, գլուխը խոնարհ,
Ականջ էր դնում հօր խօսքերին,
Վարդագոյնը աւելի վառ
Բորբոքուեցաւ նրա այտերին։
«Հայրիկ», ասաց, «դու լաւ գիտես,
Որ միշտ հնազանդ եղել եմ քեզ,
Որ քո խօսքը ամեն անգամ
Ընդունել եմ իբրև պատգամ։
Եւ եթէ ես վստահացայ
Վահանի վրայ քեզ ակնարկել,
Ապա այդպէս ես վարուեցայ,
Որովհետև երբեմն ինքդ էլ
Միտք ունէիր ինձ ու նորան
Կապել կապով ամուսնական։
Փոքր ոգայ ընդունեցիր
Նորան քեզ մօտ և մեծացրիր,
Յետոյ, իբրև գործակատար,
Նա շատ տարի ծառայեց քեզ,
Ոչ թէ ինչպէս վարձկան, օտար,
Այլ հարազատ մի որդու պէս։
Եւ փոխարէնը կամեցար
Դու վարձատրել նրան հայրաբար,
Տալով նորան ժառանգութիւն,
Ոչ միայն քո կարողութիւն,

Այլ և միակ աղջկաղ սէրը.
Բայց Հանգամանքը փոխուեցաւ,
Իրագործել մեր յոյսերը
Ինքը Աստուած չկամեցաւ:
Ինչպէս որ միշտ, այժմ էլ նոյնպէս
Հայրը, քո կամքին հնազանդ եմ ես,
Միայն խնդրում եմ, որ այս գիշեր
Ժամանակ տաս ինձ մտածեմ,
Հարցն է այնքան ծանրակշիռ
—Համաձայն ես ինձ հետ, կարծեմ—
Որ ես խոսքն վճռողական
Չեմ կարող տալ քեզ պատասխան»:

Հայրը անչափ հաւանեցաւ
Իւր աղջկայ պատասխանին,
Ուրախ էր, որ, չկշռած լաւ,
Նա չէր կպչում խոսքն բանին:
Բացի դրանից համոզուած էր,
Որ, երբ Աստղիկը մտածէր,
Պատասխանը վճռողական
Լինելու չէր բացասական:
«Այո՛, գնա, լաւ ես ասում»,
Պատասխանեց նա աղջկան.

«Իսկոյն քեզնից չեմ պահանջում
Տալ պատասխան ինձ վերջնական։
Գնա տնտեսիդ, մտածիր,
Քո սրտի հետ խորհրդակցիր,
Սուրբ պատկերի առաջ չոքած
Ուղղիր աղօթքդ առ Աստուած,
Խնդրիր նորան լուսաւորել
Անփորձ խելքդ իմաստութեամբ,
Որ այդ ծանր հարցը վճռել
Կարողանաս խոհեմութեամբ։
Գնա, դստրիկ, տէրը քեզ հետ,
Նա տայ խորհուրդ քեզ շահաւէտ։
Առաւօտը բարի լոյսին
Էլի կըխօսինք այդ մասին.
Այն ժամանակ ես կիմանամ,
Որդեակ, սրտիդ որոշումը,
Ես էլ դրացուն իմաց կըտամ,
Որ կատարեմ իմ խոստումը։

Գ.

Հոյն երեկոյ տան պարտիզում,
Ծառերի խիտ ծածկոցի տակ
Աստղիկը ճեմում էր մենակ
Եւ անհամբեր մէկին սպասում։
Հիանալի պարզ գիշեր էր,
Խոր լռութիւնը տիրել էր
Բնութեան մէջ համատարած,
Երկնակամարը զարդարած
Բիւր բիւր փայլուն աստղիկներով,
Կրկարծէիր, թէ վերևում
Հրեշտակներն են աչիկներով
Սիրով այդպէս իրար նայում.

Եւ բոլորակ լուսնեակը
Ամբաթի պէս փայլուն գէմքով,
Իւր շրջանը կատարելով,
Լուսաւորում էր աշխարհքը.
Գիշերային հովը մեղմիկ
Հաղիւ շարժում էր տերևիկ.
Հանգստանում էր բնութիւնը,
Միայն հանգիստ չէր մեր սիրունը:
«Ի՞նչ ուշացաւ, էր չէ գալիս»,
Մտածում էր նա ինքն իրան.
«Ի՞նչ է այսքան սպասել տալիս,
Արդեօք բա՞ն է պատահել նրան»:

Իմ սրամիտ ընթերցողը
Անշուշտ արդէն գուշակում է,
Որ Վահանն է ուշացողը,
Որին Սատրիկը սպասում է:
Թէև նա շատ չէր ուշացել,
Որովհետև Սատրիկն ինքն էլ
Հաղիւ թէ հինգ րոպէ անցաւ,
Ինչ որ տանից պարտէզ իջաւ.
Բայց ընթերցողը կարծելով,
Որ մեր պարկեշտ գեղեցկուհին

Անաբատ և ազնիվ սիրով
Նուիրուած է իւր Վահանին,
Գուցէ արդէն անիծում է
Տղային և մտածում է.
«Ափսոս աղջիկ, որ քո սիրտը
Որսացել է այն կապիտը»:
Որովհետև ով գէթ մի գամ
Սիրահարուել է իւր կեանքում,
Նա լաւ գիտէ, որ բոլէն ժամ
Թիւում է այդ հանգամանքում.
Նա լաւ գիտէ, ինչպէս նորա
Սիրտը լինում է տակն ու վրայ,
Ինչպէս ամեն թեթև հնչիւն
Որում է նրա ականջն խակոյն
Եւ կարծում է, թէ իւր սիրած
Անձի քայլերն է նա լսում,
Մինչ այդ իւր սիրտն է, որ յուզուած
Արագ զարկում ու բաբախում:

Աշնարիւտ է, հոգիս վկայ,
Դարան հերքող ոչ ոք չկայ,
Որովհետև այդ բանը ինձ
Լաւ յայտնի է իմ փորձերից:

Եւ թէպէտ այդ գրութիւնը
Փոքր ինչ տանջում է մեր հոգին,
Բայց տեսութեան քաղցրութիւնը
Ընշուշտ արժէ այդ տանջանքին։
Հաւատացէք, հոգիս կրտամ,
Միայն թէ մէկ էլ այդ բանը զգամ։
Առանց սիրոյ ինչ է կեանքը։
Բայց սէրն ունի իւր տանջանքը։
Թէ ինձ հարցնէք, ցօժար եմ ես.
Սիրել, տանջուիլ — երջանկանալ,
Քան թէ ապրել անբանի պէս.
Ուտել, խմել — անասնանալ։

Բայց ով գիտէ, գուցէ այդ էլ
Աշխարհի բան է, չգիտեմ.
Ես միտք չունիմ, ոչ հաստատել,
Ոչ էլ երբէք վիճել դրա դէմ։
Սակայն, գալով ես իմ անձին,
Սիրոյ մասին իմ առանձին
Ունիմ յատուկ գաղափարը,
Նոյն է ասել. թէ տիպարը։
Սէրը վայելք է երկնային,
Երջանկութեան ծով անսպառ,

Սիրով միայն աստուածներին
Պահկանացուն է հաւատար.
Եւ այն, որ է չնաշխարհիկ,
Որով մարդս է երջանիկ,
Որով կեանքը ստանում է դին,
Որ զուարթացնում է մեր հոգին,
Արժէ այն, որ նրա համար
Յաղթենք ամեն արգելքներին
Եւ ենթարկենք վտահարար
Մեր անձը բիւր վտանգներին:

«Ի՞նչ ես այդքան երկարացնում,
Ի սէր Աստծոյ, ու ձանձրացնում.
Բաւական է, համբ տարար,
Խօսքից շեղուելով անպարար:
Դու մեզ պատմիր պատմութիւնը,
Կարօտութիւն չունինք բնաւ
Լսել սիրոյ մեկնութիւնը,
Այդ մենք գիտենք քեզանից լաւ:
Քո սեփական սրտի դրդիռ
Մեզ համար չէ հետաքրքիր.
Արդեօք սիրել ես և ինչպէս.
Այդ էլ մեզ փոյթ չէ նմանապէս»:

Անշուշտ այսպէս են պատուական
Ընթերցողներս մտածում
Եւ, ինձանից անբաւական,
Նոքա խսկոյն թերթը դարձնում։
Եւ ես, զգալով իմ յանցանքը,
Ընդունում եմ մեղադրանքը.
Բայց, հակառակ ցանկութեանս,
Ես չեմ կարող պատմութեանս
Խսկոյն անցնել, որովհետև
Մինչ այժմ միջոց չեմ ունեցել
Հերոսներիս հետ դէթ թեթև
Ընթերցողին ծանօթացնել։

Բայց հերոսներս, ասեմ ձեզ,
Հերոսներ չեն ամենևին.
Անուանելով նոցա այդպէս,
Ես հետևում եմ միայն ձևին.
Թէ չէ նոքա շատ հասարակ
Մարդիկ են, ոչ հաստ, ոչ բարակ,
Ոչ շատ խելօք, ոչ էլ յիմար,
Բոլորովին իրար յարմար։
Իրը հոգեղէն արարածներ,
Իրը հասարակ մահկանացուք,

Ես մանր մանր կրքերի տէր,
Թոյլ կողմերով, մարդուն յատուկ։
Գալով նոցա այժմ անձնական
Տեսակէտին բարոյական,
Ինչպէս շուտով կըհամոզուիք,
Զատ գովելու չունիմ տեղիք։

Իմ գլխաւոր հերոսուհին,
Ինչպէս գիտէք, է Ասոդիկը,
Հրեշտականման գեղեցկուհին,
Իւր սեռի մէջ մէկ հատիկը։
Նորա չքնաղ գեղեցկութեան
Յանձնաւոր չեմ նկարն անել,
Այդ բանում իմ տկարութեան
Պատին վերն եմ խոստովանել.
Բայց որպէս զի մի զարմիար
Ընթերցողին տամ նրա մասին,
Կասեմ. գեղով էր հաւասար
Նա գիցուհուն փրփրածին,
Որի անունը իւր վերայ
Իրաւունքով կրում էր նա։
Այն միջոցին, որից ներկայ
Պատմութիւնը սկիզբն է առնում,

թէև տաբեգիրը չկայ,
թէ երբ էր այդ, կամ ո՞ր դարում,
Ընթարկուելու չեմ տուգանքի,
թէ ասեմ, որ մեր սիրունը
Արդէն տեսել էր իւր կեանքի
Տասն և ութերորդ գարունը։
Բոլորովին կազմակերպուած
Օրիորդ էր ծաղկափթիթ,
Կուրծքը շքեղ ու զարգացած,
Ինքը թեթև, ինչպէս մի վիթ.
Մի խօսքով էր այն հասակում,
Երբ սիրտը սէր է փափագում։
Բայց նրա սիրտը կարծես թէ դեռ
Քնած էր գրկում անմեղութեան,
Եւ թէ արդեօք երբ պիտ՝ զարթէր,
Այդ կարօտ էր զուշակութեան։
Որովհետև, քանի քանի
Ձայնելում էին փեսացուներ,
Երիտասարդ և անուանի,
Նոքին էլ նա մերժում էր,
Ասելով, թէ դեռ միտք չունի
Ընդունել լուծն ամուսնութեան
Եւ այդպէսով իւր ծերունի
Հօրը մատնել միայնութեան։

Սակայն այդ չէր բուն պատճառը,
Այլ Վահանն իւր սիրահարը։

Բայց այդ մասին առ ժամանակ
Կրպահպանեմ ես լռութիւն,
Միայն ինդրում եմ, մի նեղանաք,
Այլ ունեցէք համբերութիւն.
Զուտով էլի այդտեղ կրդամ,
Միայն թէ նախ ես ձեզ կրսամ
Մեր Ասդղիի մասին ինչ ինչ
Կենսագրական տեղեկութիւն,
Եւ այդ բանից կարծեմ ոչինչ
Վնաս չի կրի մեր պատմութիւն։

Հինգ տարեկան էր Ասդղիկը,
Երբ վախճանեց նրա մայրիկը,
Եւ նա մնալով որբ, պիտ՝ յանձնուէր
Օտար, վարձկան կնոջ խնամքին,
Իսկ վարձկանը, շատ էլ անձնուէր,
Պայր չի լինի որբ մանուկին։
Եւ Ասդղիի հայրը այնքան
Սիրում էր իւր փոքրիկ աղջկան,

ար, թէև գեռ առոյգ էր շատ,
Ամուսնանալ չուզեց կրկին,
Որ իւր զաւակը Հարազատ
Չանձնէ խորթ մօր խնամքին,
Փոսածելով, որ կարելից
Դայեակը լաւ է խորթ մօրից։
Մի բարեսիրտ և երկիւղած
Կին էր դայեակը Ասոդկի,
Նրա պէս մէկի ձեռին եղած
Փանուկն ինչպէս վարդ կրծոդկի.
Նա խնամում էր իւր սանիկին,
Իբրև մի մայր, ոչ օտար կին։
Նա աշխատում էր զարգացնել
Նրա մէջ զգացմունք բարոյական,
Բարին ու չարը Հասկացնել
Առակներով խրատական.
Ջանք էր անում, որ նա լինի
Համեստ, պարկեշտ, առաքինի։
Աքանչելի էր տեսարանը,
Երբ ծունկ չոքած այն մանկիկը,
Թոթովում էր նրա բերանը
«Հայր մերը» և «Անկանիմքը».
Իսկ երբ գարձաւ տան տարեկան,
Երգէն անգիր գիտէր «Փեզան»։

Որովհետև գայլակն ինքն էլ
Գրագէտ էր բաւականին,
Այդ պատճառով կարդալ գրել
Նա սովրեցրեց և իւր տանին։
Այնուհետև Աստղիկն ամեն
Գիշեր ասում էր «Ակեսցէն»,
Այնպէս մտնում անկողինը,
Սպա թէ ոչ ամբողջ գիշեր
Վրդովում էին նրա քունը
Սարսափելի վատ երազներ...

Աստղիկն մեր ահա այսպէս
Լաւ կրթուած էր բարոյապէս։
Բարոյական կրթութեան հետ
Նա ստանում էր և իրական.
Նրա գայլակը հմուտ և վարպետ
Էր արհեստում տնտեսական։
Բացի դրանից նա իւր տանին
Լաւ վարժեցրեց կար ու ձևին։
Այսպէս ուրեմն Աստղիկը,
Հագիւ տասն և վեց տարեկան.
Ունէր ամեն արժանիքը
Թէ բնական, թէ ստացական։

Հայրը շատ գոհ էր գայլեակից,
Նորա անխոնջ աշխատանքից,
Եւ այնքան մեծ վստահութիւն
Ունէր նա այն կնոջ վերայ,
Որ երբ գործով օտարութիւն
Ամիսներով գնում էր նա,
Միամիտ էր, որ իւր տունը
Լաւ պահապան կայ աղջկանը:

Մի անգամ, երբ վերադարձաւ
Նա հեռաւոր Հնդկաստանից,
—Համարեա թէ տարի անցաւ
Ինչ բացակայ էր իւր տանից:
Ուշանալու պատճառը շատ
Նշանաւոր էր նրա համար.
Պիտի վարէր մէկի դէմ գատ,
Որ պարտ էր նրան մի մեծ գումար—
Հետը մի որդի տղայ բերից,
Ատզկից չորս տարով միայն մեծ,
Որի տարիքն այն ժամանակ
Կազմում էին դեռ մի տասնեակ:
Վահան անուն էր կրում տղան,
Մի գեղեցիկ կայտառ մանուկ,

Քաղցրաբարոյ, հաճոյական,
Ընդունակ և խելքով կտրուկ։
Ստոգկի հայրը մտերիմ
Բարեկամ էր Վահանի հօր,
Որին բաղդն անհաւատարիմ
Ստիպեց կամաւ գնալ աքսոր։
Երբեմն հարուստ և երջանիկ,
Նա չգիտէր, ինչ է կարիք.
Բայց մի գիշեր խանութը կրակ
Ընկաւ, եղաւ հրոյ ճարակ։
Այն ժամանակ յուսահատուած
Թափեց նա տունը հայրական,
Կնոջն ու որդուն հետը առած
Գնաց և եղաւ աստանդական։
Թափառելով երկրէ երկիր,
Վերջը եկաւ նա Հնդկաստան,
Որ աշխատեց նա անձանձիր,
Բայց չհասաւ յաջողութեան։
Այնտեղ շուտով կինը մեռաւ
Եւ այն տարին, երբ որ հասաւ
Հնդկաստան նրա բարեկամը,
Զարկեց և իւր մահուան ժամը։

Աստղիկ Հայրը Վահանին
Հոր մահից յետո առաւ իւր տուն
Եւ այն օրից նա իւր սանին
Խնամք էր տանում, ինչպէս որդուն:
Նա իւր գրաւիչ կերպարանքով,
Համեստութեամբ, բարի վարքով
Ջուսով գարձաւ տան սիրական,
Բարեբարին և նրա աղջկան:
Աստղիկ Հոր հետ ամեն օր
Նա գնում էր նրա խանութը,
Այնտեղ մնում էր, մինչև որ
Երեկոյեան կոխէր մութը,
Յետոյ, խանութը փակելով,
Գալիս էին տուն միասին,
Ուր Աստղիկը թռչկոտելով
Դիմաւորում էր երկուսին:
«Բարով, Հայրիկ, Վահան, բարով»,
Կանչում էր նա քնքոյշ ձայնով
Եւ համբուրում էր Հոր ձեռք,
Իսկ սա նորա լոյս աչերը:
Յետոյ ճրագի շուրջ ժողովուած
Այդ փոքրաթիւ ընտանիքը
Խստակցութեամբ էր զրաղուած,
Մինչև պատրաստ էր ընթրիքը,

Որից յետոյ գիշերային
Զօթքն ասում էր խմբովին,
Եւ ամեն մէկը գնում էր
Իւր անկողնում հանգիստ քնում էր։

Առաջի հօր վարպետ ձեռին
Վահանը շուտ ընտելացաւ
Ուռուցուին ու գործերին
Եւ գոմեստի արժանացաւ,
Որովհետև տղան ծոյլ չէր,
Այլ ընդունակ, աշխատասէր։
Երկու երեք տարի հազիւ
Նա խանութումն էր աշխատել,
Արդէն գիտէր կազմել հաշիւ,
Ոպրանքն ուղիղ դնահատել։
Նոցա խանութը մանողը
Այնտեղ թողնում էր իւր փողը,
Որովհետև Վահանն այնպէս
Քաղցր էր խօսում ամենքի հետ,
Որ գնողը, գիւթած կարծես,
Համբում էր փողն իսկոյն և եթ։
Այսպէս Վահանը օրէցօր
Յոյց էր տալիս ձիրք նորանոր։

Գառայելով Հաւատարիմ
Իւր Հայրախնամ բարերարին,
Գարձաւ նորան սիրտ մտերիմ,
Որ միշտ հեշտ չէ մի օտարին։
Զատ անգամ ասում էր ծերը.
Թէ Վահանն է իւր աջ ձեռը։
Այնքան վստահ էր նորա վրայ,
Որ երբ գնում էր ապրանքի,
Կամ այլ գործով էր բացակայ,
Առանց մի փոքր կասկածանքի
Տունն ու խանութն յանձնում էր նրան
Ստոլկի Հայր Վարդան ազան։

Ներողութիւն, այստեղ օտար
Սպրդեցաւ բերնից բառ։
Ես այդ բանին առ Հաստատակ
Զատ ընդդէմ եմ և Հակառակ,
Թէև այն, կան շատերը,
Որոնք յաջող Հանդէպ Համար
Գործ են ածում օտար բառեր
Թւում ոչ ոսկաւ, այլ անՀամար։
Փոխանակ վիշտ, ասում են «պարդ»,
Որ յարմարուի կարճ յանդէն վարդ.

Ասում են «Տաբ», «Հաբ» ու «Հանաք»,
Երբ միտս յանգն է բաբ, ծաղ, թանաք։
Բայց չեմ ուզում առաջ բերել
Այսոնց նման օրինակներ,
Թէ չէ շատ հեշտ էր ինձ գրել
Ոչ թէ հատ հատ, այլ ատանակներ։
Բայց ով գիտէ, զուցէ և ես
Մեղանչել եմ տեղ տեղ նոյնպէս
Եւ արիշին գատապարտում,
Իսկ իմ սխալը չեմ նկատում։
Բայց թաթարի բառը «աղա»
Մեղնում այնքան է ընդունուած,
Որ «մեր աղուանը ով կարայ»,
Կանչում է հայն տարակուսած։
Իրաքանչիւր հայն է աղա.
Աղա Պետրոս, Վարդան աղա,
Միայն թէ աղա է նոցանից
Մէկն առաջից, միւսն ետևից։
Թէպէտ նոյնպէս և արիշ բառ
Գործ ենք ածում, այն է, «պարոն»,
Սակայն դա էլ է մեզ օտար,
Գերմանական բառ է «Baron».
Բոլոր հայերն են պարոններ,
Նոյն է ասել, թէ Baron-ներ.

Ամեն Փիս, ամեն Յոգս
Սպանիացու պէս «hidalgo»:

Այն օրից, երբ ոտը դրեց
Որբ Վահանը Ասոգիենց տուն,
Փեր Ասոգին կեանքը կրեց
Նշանաւոր փոփոխութիւն:
Ամբողջ օրը տանը փակուած,
Ինչպէս թռչնիկ մի բանտարկուած,
Զուներ ընկեր հասակակից,
Իւր խաղերին հաղորդակից.
Արդ չէր տեսնում իրանց տանը,
Բացի հօրից ու դայեակից.
Բայց ինչ եկել էր Վահանը,
Արդէն ունէր նա խաղակից:
Բանուկները սովորաբար
Ձուտ են սրատով կպչում իրար.
Ընդ լաւ է այդի համար,
Քան թէ ամբողջ մի հատ ոչխար:
Նոյնպէս Ասոգին ու Վահանը
Ընտելացան իրար շատ շուտ.
Տանը փակուած խեղճ աղջկանը
Տղան այդ թվում էր անգին գիւտ:

Կիրակի և ուրբ օրերը,
Երբ փակ էին խանութները,
Երբ ուրեմն կարիք չկար,
Որ Վահանը տանից գնար,
Ատղիկն ու նա ամբողջ օրը
Ուրախ խաղում էին տանը
—Անախորժ չէր նայել հօրը
Նոցա անմեղ զուարճութեանը —
Կամ ստուերաշատ ասն պարտիզում
Ուրախանում ու վազվզում,
Փնջեր կապում ծաղիկներից,
Քաղում հասած պտուղ ծառերից.
Խաղում էին աչքախփուկ,
Մանուկների սիրած մի խաղ,
Կամ երբեմն կատու և մուկ
Եւ բարձրացնում ուրախ ծիծաղ:
Քաղցրաւէնիք էր, թէ հրուշակ,
Կամ անոյշ միրգ, երբէք մենակ
Ատղիկն առանց իւր Վահանի
Բնաւ բերանը չէր տանի:
Այսպէս ահա մանուկները
Արդէն սիրում էին իրար,
Թէև անմեղ էր այդ ուրը,
Բայց արդեօք միշտ այդպէս կըմնար:

Այն, այդպէս էլ չմնաց,
Որովհետև կամաց կամաց,
Քանի նոքա առան հասակ,
Այնքան ատացան սիրոյ ճաշակ։
Պատահում էր, որ շատ անգամ
Տան պարտիզի մութ խորքերում,
Առանձնացած ամրողջ մի ժամ,
Իրար գրկում ու համբուրում.
Բայց ոչ հայրը և ոչ գայլեակ
Այդ բաներին չէին տեղեակ։
Խորամանկ է այն սէրը,
Դիտէ ծածկել իւր գործերը։

Գեղեցկուհու սիրոյ խանդով
Քաջալերուած մեր Վահանը,
Եւ աւելի ջերմ եռանդով
Թէ խանութում և թէ տանը
Ծառայում էր բարեբարին,
Որ իւր կողմից իւր որդեգրին
Այնքան սիրեց, որ Աստղիկն
Պատգիր էր տալ նորան կին։
Եւ մի անգամ, երբ Աստղիկը
Արդէն էր տան վեց տարեկան,

Յայտնեց նորան հայրն իւր միտքը
Եւ նկատեց, որ իւր աղջկան
Շատ հաճելի էր այդ բանը,
Միայն պատուիրեց, որ Վահանը
Ու ժամանակ թող չիմանայ,
Որ պիտ՝ իրան փեսայանայ:

Ո՞վ չի նեղի մեր սիրունին,
Որ զանց արեց այդ պատուէրը
Եւ հաղորդեց իւր Վահանին
Նոյն իսկ գիշեր հօր խօսքերը:
Թէ աղջիկը և թէ տղան,
Կասկած չկայ, շատ գոհ եղան,
Որ երկուսի բաղդի համար
Ինքը հայրը էր հոգատար:
Երբ ընթրիքից հետ հեռացան
Նոքա իրանց սենեակները,
Համարեա թէ ժամեր անցան,
Քունը փակեց ոչ աչքերը
Մեր երջանիկ սիրհարների.
Ամեն մէկը իւր մտքերի
Բուռն հոսանքից յափշտակուած,
Սիրտն յոյսերով ալեկոծուած,

Արթուն աչքով երազում էր
Այն ըղձալի երջանկութիւնն,
Որ երկուսին խոստանում էր
Միաշաղկապ ամուսնութիւնն։
Միայն այլ և այլ կողմից էին
Նայում երկուսն էլ այդ բանին
Թէև երկուսն էլ հաւասար
Չգտում էին դէպի իրար։

Գլուխը գրած կակուղ բարձին,
Խոսում էր Սատրիկն այսպէս.
«Ոգորմած է բազդն իմ անձին,
Իմ վիճակից շատ գոհ եմ ես։
Գեղեցիկ եմ, ինչպէս շուշան,
Ունեմ քիչ աղջիկ կայ ինձ նման.
Ո՞ր այր մարդը կըդիմանայ,
Որ հաճոյքիս չսարկանայ։
Հայրս հարուստ և ես միակ
Նորա ժառանգ օրինաւոր,
Միշտ կըհագնեմ մետաքս, դիպակ,
Կեանք կըվարեմ ճոխ, փառաւոր.
Եւ կունենամ ես ամուսին
Մի մարդ, որին ամեն մի կին

Ուրախութեամբ կընկնի դիրքը,
Որ յաղեցնէ իւր ջերմ կիրքը։
Բայց նա պիտի պատկանի ինձ
Եւ միայն ինձ պիտի սիրէ,
Եւ ոչ մի կին բաց ինձանից
Նորա սրտին պիտ՝ չտիրէ։
Նա չէ հարուստ, ազնուազարմ,
Բայց հաճելի, կորիւն ու թարմ.
Գեղեցկութեամբը այրական
Իմ Վահանն է անզուգական։»

Այն միջոցին և Վահանը
Պտածում էր իւր սենեակում.
«Անտէր որբի պահապանը
Ինքը Աստուած է երկնքում։
Սուտ չէ ասած, թէ Աստուած տայ,
Երկու ձեռով մարդուն կրտայ։
Եւ ես այդ բանը ինձ վերայ
Հիմա փորձում եմ աշկարայ։
Փոքր հասակում մահը զրկեց
Ծնողներից, մնացի անտէր,
Բայց Աստղիկ հօրն ուղարկեց
Երկինքը ինձ պաշտպան ու տէր։

Միրով առաւ նա ինձ իւր տուն,
Մնամեց, ինչպէս Հայր իւր որդուն,
Խմորեցրեց ինձ առուտուր
Եւ այժմ, իբրև վարձ և տրիտուր
Իմ Հարազատ և անձնուէր
Դառաջութեան համար, նա ինձ
Կամենում է շնորհել նուէր
Ամենալաւն իւր գանձերից—
Իւր մէկ հատիկ դուստրը չքնաղ,
Որի դէմքը լուսաթաթախ,
Որի աչքերը սևորակ
Ջուրջ տարածում են սիրոյ կրակ։
Ձատերը իմ ընկերներից
Պիտ՝ նախանձեն, երանի տան,
Որ Հասցրեց կոյր բաղդը ինձ
Այս երկրաւոր երանութեան։
Ես կունենամ գեղեցիկ կին,
Տեսքով նման արեգակին,
Բայց գլխաւորը այն է, որ
Միակ ժառանգ է Հարուստ Հօր։
Ձատ լաւ բան է, Աստուած վկայ,
Երբ մարդ ունի գեղեցիկ կին,
Բայց երբ կնոջ Հետ շատ էլ փող կայ,
Նա ստանում է կրկնակի գին։

Դէհ ուրեմն, Վահան, ցնծա,
Բազդից առանում ես լաւ ընծայ,
Ընծայ շքեղ ու թանկագին,
Հարստութիւն ու Աստղկին»....

Քրտնաքաստակ երկրագործի
Աշխատանքով ցանած արտը
Ահա հասնում է, և հնձի
Պատրաստվում է չարքաշ մարդը
Երգէն լցուել են հասկերը,
Լցուել են և ոսկեգծվում,
Ծանրացել են հատիկները,
Հողմից դաշտը ալէկոծվում։
«Ա՛ կին», կանչում է գիւղացին,
«Մի լաւ նայիր դու մեր հացին,
Տե՛ս, ծփում է արտն, ինչպէս ծով,
Եռատ կրկնի հունձն Աստուծով։
Քառ շատ երկու, կամ երեք օր
Երկինքն էլի թէ խնայէ,
Ու թէ, ինչպէս մինչև այսօր,
Նա ողորմած աչքով նայէ,
Ուրախ սրտով, երգ ու տաղով
Մինչ երեկոյ կաշխատեմ ես,

Հունձս կանեմ սուր մանգաղով,
Փայլուն, լուսնի եղջիւրի պէս։
Մշակի կեանքն է բարեբաստիկ,
Երբ ցորենով ոսկէհատիկ
Լիքն է նորա շտեմարանը,
Անոյշ գինովն էլ մառանը։
Ուտծով երկուսն էլ կըլինի.
Արտս կըտայ ինձ ցորեն շատ,
Կուենեմ և առատ գինի
Ես իմ այգուցը ցանկապատ,
Ուր խաղողի ողկոյզներով
Ծանրաբեռնած են որթերը,
Ոլոնց, կարմիս, յակինթներով
Զարդարել է Ստեղծող Տէրը։
Ուրախ եղիր, սիրելի կին,
Ինչպէս ուրախ է իմ հոգին,
Իմ ցանածը հատիկ հատիկ
Կըժողովեմ հարիւրապատիկ...

Բայց ասած է—արդեօք ումից
Ես կամ ինչտեղ, այդ չգիտեմ.
Միայն չեմ կարծում, թէ ձեզանից
Մէկը վիճէ այդ խօսքի դէմ,

Որովհետև ամենայն օր
Դա հաստատվում է նոր ի նոր—
«Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ
—Նոր հայերէն լեզուի մէջ «Ծոյ»
Վերջաւորուող բառ չեմ գտնում,
Այդ պատճառով յանդի համար
Այդ անիմաստ վանկն եմ դնում։
Գիտեմ, լաւ չէ, բայց չկայ ճար—
Մինչև այն օր քանի շաբաթ
Լաւ եղանակ էր, ոչ մի հատ
Ամպի կտոր չէր երևում
Պարզ երկնքումը վերևում.
Բայց այն օրը, որտեղից էր,
Կուտակուեցան հսկայաձև
Զարագուշակ սև սև ամպեր.
Օրը մթնեց, հանգաւ արև,
Փայլեց փայլակ, թնդաց որոտ,
Սուլեց մրրիկ, սարսեցրեց օդ,
Տեղաց կարկուտ, թափուեց հեղեղ.
Աշխարհի վերջ, նոր ջրհեղեղ։
Եւ մի ժամում ոչնչացաւ
Գիւղացու յոյսը թանկագին,
Երբ փոթորիկը վերջացաւ,
Ինքէր արտը, աւեր այդին։

Այնպէս և իմ հերոսները
Զգացին բաղդի հարուածները,
Որոնք նոցա քաղցր յոյսերին
Անակնկալ վախճան դրին։
Մինչև այժմ Ասորկի հօր
Առուտուրը գնում էր յաջող.
Զատերն էին նախանձաւոր
Նրա բարօրութեան միշտ աճող։
Բայց կայ առած անհերքելի.
«Գործի վախճանն է գովելի։»
Այսպէս և նա յանկարծակի
Ենթարկուեցաւ մեծ փորձանքի։
Նորա նաւը, բեռնաւորուած
Հնդկաստանի հարստութեամբ,
Յաջող հողմով թեւաւորուած,
Սլանում էր արագութեամբ
Բերելով իւր տիրոջ համար
Ոսկի, մարգարիտ, մետաքս, գոհար
Եւ Քաշմիրի բարակ շալեր,
Եւ թանկագին համեմունքներ։
Ովկիանոսը Հնդկական
Նաւն անցնելով արագ ու շտապ,
Ապա ծոցումը Պարսկական
Լողաց թեթև, ինչպէս կարապ։

Յուսալի էր յաջող աւարտ
Նաւի գնացքին։ Ծովը հանդարտ
Տարածվում էր ամեն կողմը
Հայելու պէս։ Թեթև հողմը,
Երբեմնակի համբուրելով
Ջրի երեսը գողգոջուն,
Կրկարծէիր, թէ ժպտելով
Ծովն երկնքին տալիս ողջոյն։
Չկայ ոչ ինչ նրանից լաւը,
Երբ սահում է թեթև նաւը
Հանդարտ ծովի վերայ անվերջ,
Ինչպէս արծիւը օդի մէջ։

Բայց այն ինչ է, ինչպէս սև բիծ
Այնտեղ հորիզոնի վերայ,
Առաջաստ է արագօք, թէ ցից
Լերան գագաթ ծովեզերեայ։
Նաւապետը իւր դիտակը
Այն կողմն ուղղեց, քթի տակը
Ինչոր անէծք մրթմրթաց նա
Եւ ցոյց տուեց սև բծի վրայ։
«Նաւաստիններ, զգոյշ կացէք,
Մեզ սպառնում է», ասաց, «վտանգ,

Ռազատանները հաւաքեցէք,
Խոթորկի հետ շուտ կռիւ կրտանք։
Այն սև բիծը չարագուշակ
Սև ամպ է, որ այս կապուտակ
Երկինքը շատ շուտ կը ծածկէ,
Կը բորբոքուի, կրկայծակէ»։
Այդ խօսքից յետ հազիւ անցաւ
Մի ժամ, կամ թէ քիչ աւելի,
Այն սև բիծը փոխարկուեցաւ
Հազին ամպ մի ահրելի,
Որ մթնեցրեց ցերեկը լոյս,
Ինչպէս գիշեր տխուր, անլոյս։
Նախ մի բոպէ հանդարտութիւն,
Ապա օդում մի խուլ թնդիւն.
Յանկարծ ծածկեց ոպիտակ փրփուր
Ծովի երեսը շփոթուած,
Կատղած հողմը ահ ու սարսուր
Բերեց մարդուն յուսահատուած։
Եւ լեռնացան ալիքները,
Բորբոքուեցան փայլակները.
Ոլոռմունք, ճիչ ու շառաչիւն—
Ինչ խառնաշփոթ ահեղ գոչիւն։
Ալիքներին մի խաղալիք
Նաւը, ինչպէս թեթեւ գնդակ,

Մերթ նեռվում է դէպի երկինք,
Մերթ գլորվում ծովի յատակ:
Կայմերն ընկան, ջարդուեց դէկը.
Էլ ճար չունի նաւաբէկը:
Նաւը գարկուեց ժայռին—ճայթիւն.
Կորաւ, չկայ էլ փրկութիւն....

Աստղկի հայրն երեկ հարուստ,
Այսօր հագիւ ունի ապրուստ:
Երբէք բաղդը փոփոխական
Մի հարուածով չէ բաւական,
Եւ երբ ուզում է նա մարդուն
Դաւաճանել ու հալածել,
Որքան և զգոյշ լինիս, արթուն,
Քեզ փրկութիւն դուր է տածել:
Վարդան աղան, այժմ ալէզարդ,
Զէր կարող, իրը երիտասարդ,
Նորից սկսել փող աշխատել.
Էլ այժ չունէր, ուզէր շատ էլ:
Այդ պատճառով գաղարեցրեց
Իւր գործերը առևտրական,
Մանէթին մանէթ վճարեց,
Ում որ ինչքան էր պարտական:

—Ոչ թէ ինչպէս մեր օրերում
Հարիւրին տասն են վճարում,
Կամ թէ ոչինչ, և մնանկը
Ձուտով հիմնում է իւր բանկը —
Այսպէս Ծերունն ազնուաբար
Ազատուեցաւ իւր պարտքերից,
Սակայն ինքը, դժբաղդաբար,
Զրկանք կրեց ուրիշներից։
Յուսահատ էր նրա գրութիւնը.
Նորան մնացած միակ տունը
Իւր արդիւնքով փոքրագումար
Այժմ նորան ապրուստ պիտի տար։
Պէտք է արդեօք աւելացնել,
Որ Ատզկին ու Վահանին
Ընտանեաւ ամուսնացնել
Էլ մտադիր չէր Ծերունին։
Վահանը իւր բարեբարի
Տունը թողեց, ուր վեց տարի
Վայելում էր խնամք ու սէր
Նորա յարկի տակ հիւրասէր։
Դառայելով այժմ օտարին
Վարձով, իրրև գործակատար,
Ցցելում էր բարեբարին,
Երբ նա միայն ունէր հնար։

Այնտեղ տեսնում էր Աստղիկն,
Համբուրում էր, սիրում կրծքին.
Ի հարկէ, երբ ոչ ոք նեբկայ
Էր այդ բանին, իբրև վկայ։—

Այժմ տեղեակ ես, ընթերցող,
Հերոսներիս անցեալ կեանքին
Եւ նորա հետ կապ ունեցող
Երկու երեք հանգամանքին.
Ուրեմն ես կարող եմ քեզ
Հետս իսկոյն տանել պարտէզ
Որ Աստղիկը, ինչպէս գիտես,
Վահանին է սպասում, ոչ մեզ։
Բայց մենք նոցա չենք խանգարի,
Ընդունուած չէ, հարկ էլ չկայ,
Լինել երկու սիրահարի
Տեսակցութեան անկոչ վկայ.
Ոչ էլ կերթանք մենք իսկապէս,
Այլ միայն մտքով ականատես
Կլինինք այդ տեսարանին,
Կամ թէ ինքս ամեն բանին,
Ինչ որ այնտեղ կպատահի,
Քեզ տեղն ի տեղ կրտամ հաշիւ,

Ոչինչ ծաղուկ ես չեմ պահի,
Թող կրմնաս ամենայնիս։

Ուրեմն, ինչպէս յայտնի է քեզ,
Եթէ միայն մոռացել չես,
Աստղիկն իրանց տան պարտիզում
Իւր Վահանին էր ապասում
Եւ ապասում էր շատ անհամբեր։
—Տեսս այս գլխի առաջին տան
Սկզբի տողերն ու միտդ բեր—
Աստղկի անհամբերութեան
Թու կըլինիս ներողամիտ,
Թէ պատահել է քեզ առիթ
Որոշ տեղում ու վայրկեանին
Ապասել արտիդ սիրականին։
Բայց Վահանը շատ չուշացաւ,
Զուր էր գանգատը Աստղկի.
Ահա արդէն երեւեցաւ
Նա մի ծայրում ճեմելիքի։
«Վահան, դու ես, Վահան, եկար»,
Ասաց աղջիկն, «ինչ ուշացար»։
—«Այո, ես եմ, հոգիս, եկայ.
Կանչել էիր շտապով, ինչ կայ»—

Պատասխանեց Վահանը և,
Համբուրելով նորա ծոցը,
Թևերի վրայ առած, թեթև
Տարաւ մօտի հովանոցը։

ՎԱՀԱՆ

Այստեղ մութն է և ապահով,
Օդը մաքուր, անոյշ ու հով.
Այստեղ մեզ մարդ չի խանգարի,
Սա՛ ինձ, իմ հրեշտակ բարի,
Իմ նազելի՛, իմ աչքի լոյս,
Արդեօք պիտի ուրախացնե՞ս
Դու ինձ, տալով սրտիս նոր յոյս,
Թէ վերջին կայծն էլ պիտ՚ հանգցնես։

ԱՍՏՂԻԿ

Վահա՛ն, իմ քաղցր սիրելի՛ն,
Պատ է ժամը օրհասական.
Ձուտով բաղդի անխնայ ձեռը
Կբաժանէ մեր սրտերը

ՎԱՀԱՆ

Սա՛, արդեօք ինչ նոր վտանգ
Սպառնում է մեզ բազդը անգութ.
Մթթէ միայն վիշտ ու տանջանք
Նա մեզ տալու է հեռամուտ։

ԱՍՏՂԻԿ

Ինձ մարդու են տալիս, Վահա՛ն։

ՎԱՀԱՆ

Իրա՞ւ։ Վա՛յ ինձ։ Ո՞վ է փեսան։

ԱՍՏՂԻԿ

Վաճառական է մի հարուստ։

ՎԱՀԱՆ

Սպա վճռած է իմ կորուստ։—
Բայց ո՞վ է նա։ Երիտասարդ
Եւ գեղեցիկ է անպատճառ։

ԱՍՏՂԻԿ

Ոչ, բարեկամ, եղիր հանգարտ.
Իմ Վահանին չէ հաւատար։

ՎԱՀԱՆ

Տեսնել ես նրան մինչև անգամ։

ԱՍՏՂԻԿ

Այո, ոչ մէկ, այլ շատ անգամ։
Նա մեր դրացին է։ Ամեն օր,
Համարեա թէ կանոնաւոր,
Միշտ մի և նոյն ժամանակին
Գան է գալիս մեր փողոցում,
Թէ լաւ, թէ վատ եղանակին.
Շուտ շուտ մեր տան դիմաց կանգնում,
Աչքը տնգում է ուղղակի
Պատուհանին իմ սենեակի,
Յուսալով, թէ կըյայտնի
Տեսնել դէմքը իւր տանջողի։
Մի խօսքով նա սիրում է ինձ,
Խելագարուած է ինձ համար։

ՎԱՀԱՆ

Սիրում է քեզ։ Բայց ո՞ստեղից
Եւ կամ ինչպէս այդ իմացար։

ԱՍՏՂԻԿ

Կնոջ աչքը, դու չգիտես,
Թափանցիկ է ու սրատես,
Եւ երբ որ սէրն է առարկան,
Սիրտը գժուար խաբէ աղջկան։—
Այսօր եկել էր նորանից
Հօրս մօտ մի Հարանախօտ կին.
Աղբիւր էր թափվում բերանից,
Ճարտար շարում խօսքը խօսքին,
Փեսացուի արժանիքը
Բարձրացնելով մինչ երկինքը։
—Կից սենեակի դռան ետևից
Ականջ դնել յարմար էր ինձ—
Գովում էր նրա ազնուութիւնն,
Բարի սիրտը, խաղաղ բարքը,
Իշխանական հարստութիւնն
Եւ նորա տան սարք ու կարգը։
Ասում էր, որ թագուհու պէս

Նորա ձեռին միշտ կապրեմ ես,
Եթէ միայն արժանանայ
Իր ամուսին կանչել ինձ նա։
Հայրս իր կողմից հաւանելով
Առաջարկը խնամախօսի,
Երձակեց նրան, խոստանալով,
Որ իր աղջկայ հետ կըխօսի,
Եւ կըստանայ հարսանը
Վաղը նորա պատասխանը։
Ապա կանչեց նա ինձ իր մօտ,
Պատմեց բոլորը համառօտ,
Թէ ինչի էր եկել կինը,
Եւ ինչ էին խօսել նոքա։
—Զգիտէին և ոչ մինը,
Որ դռան ետև մի լսող կայ—
Նա աշխատեց ինձ համոզել
Համաձայնել գրացուն ուզել,
Որ լինելով հարստի կին,
Ապրեմ, ինչպէս մի մեծ տիկին։

ՎԱՀԱՆ

Յետոյ, Աստղիկ, ինչ պատասխան
Տուիր արդեօք դու քո հօրը։

ԱՍՏՂԻԿ

Ես խոստացայ նորան, Վահան,
Պատասխանել վաղուայ օրը։

ՎԱՀԱՆ

Բայց կարող եմ իմանալ ես,
Թէ ինչ պիտի պատասխանես։

ԱՍՏՂԻԿ

Կասեմ, յօժար եմ ամուսին
Լինել Հարուստ Հարևանին։

ՎԱՀԱՆ

Մինթէ կուզես նորան Աստղիկ,
Կընես ինձ անհաւատարիմ։

ԱՍՏՂԻԿ

Այո, կուզեմ, իմ Վահանիկ,
Որ իսկապէս քեզ պատկանիմ։

ՎԱՀԱՆ

Չեմ հասկանում։

ԱՍՏՂԻԿ

Կը հասկանաս,
Երբոր բոլորը կիմանաս։

ՎԱՀԱՆ

Ապա ուրեմն հասկացրու։

ԱՍՏՂԻԿ

Իմ ասածին լաւ ուշ դարձրու։—
Իմ բարեկամ, դու լաւ գիտես,
Թէ որքան թանկ ես ինձ համար.
Համոզուած եմ, որ դու նոյնպէս
Զգում ես դէպ՝ ինձ սէր բոցավառ։
Բայց մենք աղքատ ենք երկուսս էլ,
Եւ պատահել է ինձ լսել,
Թէ սէրը փոր չիկշտացնի.
Ես կաւելցնեմ—սովից կանցնի։

Այդ պատճառով մտքից հանենք
Ամուսիններ լինել իրար,
Մենք աւելի շատ լաւ կանենք,
Մնալով միմեանց միշտ սիրահար։
Թող համաձայն մեր օրէնքին
Ես համարուիմ ուրիշի կին,
Արտիս ընտրած ամուսինը
Միշտ կըլինի իմ Վահանը։
Իմ սէրը նա կըվայելէ,
Նորան միայն կայրէ կիրքս,
Նա ամեն օր ինձ կայցելէ,
Անտարտրքոք կընկնի գիրկս։
Սա՛, Վահա՛ն, համաձա՞յն ես։

ՎԱՀԱՆ

Այո՛, բայց այդ ինչպէս կանես։

ԱՍՏՂԻԿ

Միամիտ կա՛ց, դորա համար
Ստածել եմ մի լաւ հնար.
Եւ այդ հնարն է մի պայման,
Ինքն ըստ ինքեան անմեղ ու հեշտ,

Թէ ինձ սիրում է իմ փեսան,
Պիտ՝ ընդունի նա անհրաժեշտ։

ՎԱՀԱՆ

Ասա ինձ այդ պայմանն, Աստղիկ։

ԱՍՏՂԻԿ

Ու այժմ դա է մի գաղտնիք։—
Հիմա գրկիր, համբուրիր ինձ,
Եւ բաժանուինք շուտ միմեանցից։
Արդէն ուշ է։ Վաղը կրգաս
Այս իսկ ժամին դարձեալ պարտէզ,
Մնացած բաներն էլ կիմանաս,
Եւ գաղտնիքս էլ կըյայտնեմ քեզ։

Իրաւ ուշ է։ Այդ պատճառով
Ես էլ ասում եմ. մնա՛ք բարով։
Ժամ է արդէն վերջացնելու
Եւ քնի գիրկը մտնելու։
Բայց նախ պէտք է ներողութիւն
Խնդրեմ ես իմ ընթերցողից,

Որ երբակի երկարութիւն
Ունի այս գլուխը առաջնից։
Բայց շատերը անկողնի մէջ
Սովորաբար քանի մի էջ
Կարդում են, որ քունը տանի.
Գուցէ գրուածքս պիտանի
Կլինի այդ նպատակին,
Թէև այն ցանկալի չէր
Այդ ինձ, իբրև հեղինակին.
Բայց ինչ արած։—Բարի գիշեր։

Դ.

Այոց Պարնասը զառիվեր,
Դժուարակոխ է ինձ համար.
Ես արծուի չունիմ թևեր,
Որ սլանամ նորա կատար։
Այնտեղ միայն հռչակաւոր
Երգիչների համար կայ տեղ,
Ապա հանճար է հարկաւոր,
Որ ընդունուած լինիս այնտեղ—
Մուսաների բնակարանում,
Անմահների վեհարանում,
Ուր Ապոլլոնը Մուսագէտ,
Երգիչների գերիշխանը,

Օլիմպոսի գագաթից յետ
Ունի երկրորդ իւր կայանը.
Եւ Հանգէսներ կատարելով,
Նուագում է իւր ոսկէքնարը.
Նրան ձայնակցում է պարելով
Մուսաների անմահ պարը:
Նոքա քոյրեր են թէով ինը,
Նոցա մայրն է Մնէմոզինը,
Եւ հայրը Զևսն Օլիմպիացին,
Որ արտաքոյ ամուսնութեան
Ընծայեց իւր սէրն երկնածին
Ատուածուհուն յիշողութեան:
Օլիմպիացու սիրհարական
Երկածների պատմութիւնը
Չէ իմ վէպի բուն առարկան,
Թէ չէ արժէր կրկնութիւնը,
Այսքան կասեմ այս անգամուան,
Որ Զևսը էր մեծ Դոն-Ժուան:
Ինքը պաշտող գեղեցկութեան,
Հէտն էլ շատ նուրբ ճաշակի տէր,
Սիրուհիների համակրութեան
Հասնելու հնարքը լաւ գիտէր:
Այդ պատճառով նորա գրկին,
Ոչ միայն անմահ դիցուհիներ,

Զատ հոգածին աղջիկ ու կին
Վայելել են զգուանք ու սէր.
Թէև նորա կինը Հէրան
Նախատում էր նրան մի բերան:

Ես մի երգիչ և բանաստեղծ
Զևսին ինչպէս գատապարտեմ,
Մինչ համոզուած եմ, որ անկեղծ
Ընորհակալիք նորան պարտ եմ:
Զատ վատ բան է—այստեղ ինչ վէճ—
Ուրիշի կնոջ խելքից հանել
Եւ այդպէսով մարդ ու կնոջ մէջ
Ատելութեան սերմը ցանել.
Բայց ինչ Զևսին թոյլ է տրուած,
Մահկանացուին է արգելուած:
Այո, ես ինձ Օլիմպիացուն
Զգում եմ անչափ երախտապարտ.
Եւ ո՞րն է այն մահկանացուն,
Որ չլինի նրան շնորհապարտ:
Նրա կատարած գեղծումները
Բարոյական կանոնների
Եւ իւր անձի կեղծումները
Ամեն օք էլ նրան կընեին,

Որովհետև հետևանքը
Բարեզարգեց մարդկանց կեանքը։
Նորա սիրոյ պտուղներից
Ընտանեբարիկ և պատուական
Յիշատակել, թէ թոյլ տաք ինձ,
Մի քանիսն էլ է բաւական,
Իբր ապացոյց իմ խօսքերին,
Թէ մենք Զևսի Օլիմպիական
Իրոսական արքածներին
Կեանքի վայելքն ենք պարտական։
Հարկաւոր եմ համարում ատ
Առաջ բերել քանի մի փաստ։

Մեզ ընծայեց նորա սէրը
Ընտրհալի մուսաներին,
Նոցանից են պոէտները
Ոգևորվում շնորհով վերին.
Եւ երգելով սէր ու գինի,
Դեղեցկութիւն և քաջութիւն,
Նախնեաց կեանքը առաքինի,
Ուրախութիւն կամ տրտմութիւն,
Զարթում են մեր սիրտը ուժգին
Եւ գմայլեցնում են մեր հոգին։

Էվրինոմէն չքնաղատես
Զևսից ծնաւ Քարիտներին,
Որոնք, ինչտեղ որ գան հանդէս,
Ընորհք են տալիս ամեն բանին:
Պիոնէին վիճակուեցաւ
Զևսից լինել մայր Աստղկին,
Որ իրաւամբ արժանացաւ
Գեղեցկութեան մրցանակին.
Նա է թափում սիրով քնքոյշ
Մարդու սիրտը թէ վաղ, թէ ուշ:
Նմանապէս Զևսն եղաւ Հայր
Ապոլլոնին ոսկէգանգուս,
Որին թէև խաւարն է մայր,
Սակայն ինքն է լուսոյ աղբիւր.
Աստուած երգի, նուագածութեան
Եւ առաջնորդ մուսաների,
Քաջ զէկավար մտածութեան
Պոէտների — իւր սաների,
Որ իւր քնարով քաղցրահնչիւն
Փարատում է մեր տրտմութիւն:
Սէմէլէն, դուստրը Կադմոսի,
Ճաշակելով Զևսի սէրը,
Եղաւ ծնողը Բաքոսի,
Որի մեծ է սատանձնած դերը.

Նրա պարգևն է անոյշ գինին,
Խաղողի հիւթն ուրախարար,
Ոգևորող երգիչներին,
Կաստալիայի ջրին հաւասար.
Այդ պատճառով Պարնաս լեռան
Միւս գագաթն է նրան բնակարան:

«Ինչի համար, ասա, պոէտ,
Պատմում ես մեզ այդ բաները,
Ի՞նչ կապ ունին քո վէպի հետ
Օլիմպիական աստուածները:
Մենք հեթանոս չենք, մեզ համար
Արժէք չունին կռապաշտական
Առասպելները անհամար,
Յունական, թէ Զրադաշտական:
Նոյն իսկ Հայոց Անահիտը
Երբէք գալիս չէ մեր միտը.
Իսկ դու սկսել ես մի առ մի
—Զրգիտենք, ինչ նպատակով—
Զևսից սերուած բոլոր զարմի
Անունները թուել կարգով:
Թող Զևսին ու նրա պալատին,
Փոյթ չեն մեզ ոչ նա, ոչ Երոս.

Մենք Հելլէն չենք և ոչ Լատին,
Ոչ դու Վիրգիլ կամ Հոմերոս։
Թող հին Օլիմպը հնութեան
Պատմիր, վերջ տուր քո պատմութեան».
Ասում են ինձ արտնջելով
Ընթերցողներս անհամբեր,
Ճակատներին կուտակելով
Հաճութեան մռայլ ամպեր։
Բայց և այնպէս—մինչև անգամ
Վտանգելով ես իմ վարկը—
Նախ քան կրկին վէպս կրգամ.
Պէտք է քննեմ ես մեր վարքը.
Արդեօք իրաւ այժմեան մարդիկ
Պաղարնել են պաշտել հին դիք։

Ճշմարիտ է, տատնինը դար
Արդէն հաշվում ենք այն օրից,
Ինչոր Որդին Պարզոյ արդար
Խափանց Օլիմպն իւր հիմքերից,
Եւ իւր խօսքով ստուգածային,
Հերքեց մոլար աստուծներն,
Հերկեց սրտերը մարդկային,
Ճշմարտութեան ցանեց սերմերն

Եւ մեզ համար, իրրև փրկանք,
Խաչի վերայ կնքեց իւր կեանք։
Սակայն, եթէ որ անաչառ,
Խիստ քննենք մեր վարք ու բարքը,
Կըհամոզուինք մենք անպատճառ,
Գովելի չէ մեր արարքը.
Կըհամոզուինք, որ լոկ անուամբ
Եւ առ երես ենք քրիստոնեա,
Այն ինչ գործով ու մտածմամբ
Դից ջերմեռանդ ենք պաշտօնեա.
Թէև լաւերը նոցանից
Ըրհամարհած են մեզանից։

Այսպէս ահա Օլիմպիական
Ատուածների վեհապետին
Այժմ ապրող ազգը մարդկան,
Տապալելով երկնից գետին,
Ոչ միայն զրկեց նրան իւր փառքից,
Այլև խլելով նրա շանթերը,
Հնարեց Զևսի կիզիչ զէնքից
Էլէքտրական լապտերները.
Եւ օգնութեամբ նոյն շանթերի
Խօսում հեռու պարզ անթերի։

Նորա ազնիւ կողակիցը,
Ծանրաբարոյ տիկին Հէրան,
Իւր ամուսնու գահակիցը
Արքունիքում Օլիմպ լերան,
Որ չնայած իւր հեշտասէր
Տղամարդու արարքներին,
Ինքը մնաց միշտ անձնուէր
Ամուսնական իւր պարտքերին.
Սակայն նորա օրինակին
Այժմ հետևող շատ քիչ կայ կին։
Զևսի գլխի ազնիւ ծնունդ,
Կապուտաչեայ Աթէնաստ,
Որ շնորհում է հոգուն սնունդ,
Իւր հանճարից տալով մասը,
Այժմ չունի ոչինչ պատիւ
Ոչ փոքրերից, ոչ մեծերից,
Դա երևում է բազմաթիւ
Յիմարական մեր գործերից,
Որոնց կազմում չեմ ես ցանկը,
Ափսոսալով աշխատանքը։
Ես չեմ ուզում շարունակել
Թուել անարգուած աստուածներին,
Բաւական է յիշատակել
Այստեղ երեք այդ մեծերին։

Այժմ անցնենք միւսներին,
Որոնք այժմ աւելի, քան
Վաղուց անցած հին դարերին,
Մեր պաշտաման են առարկան:
Գոցա թիւը մեծ է նոյնպէս,
Բայց միայն չորսին կը յիշեմ ես:

Զևսի գաւակն ապօրինի,
Խորամանկ և գող Հերմէսը,
Որ, դեռ մանուկ, Ապօլլօնի
Գոզացաւ յիսուն գէր եզը,
Ունի անթիւ հետևողներ,
Մարդիկ ամեն տեսակ կոչման,
Թէ մեծ և թէ փոքր գողեր,
Որոնց տէրն է նա և պաշտպան:
Բայց մեր գողերն այնքան վարժ են,
Որ մեն մէկը Հերմէս արժեն:
Պատերազմի և ապանութեան
Արիւնռուշտ աստուած Արէսը,
Որ մարդկային գազանութեան
Կատարեալ է հանդէսը,
Չէ ունեցել այնքան զոհեր
Կռապաշտութեան սև օրերում,

Որքան հիմա մեր մարդասէր
Եւ լուսաւոր կոչուած դարում։
Մենք կատարում ենք բիբերով,
Ոչ ինչպէս հնում հարիւրներով։
Մերկ գիցուհին պառնկաւթեան,
Փրփրածինն Աֆրոդիտէ,
Որ մարդկանց մէջ պիղծ ցանկութեան
Կիրքը վառել շատ լաւ գիտէ,
Ներկայումս է շատ յարգի,
Ամէն ևս, քան հնում,
Մարդիկ ամեն դասակարգի
Նորա առաջ ծունր են գնում.
Եւ ձօնում են նուէր առատ,
Յատնախելով bal mascarade։
Ստոգիի հետ միհատասար
Վայելում է պատիւ ու փառք
Գինու աստուածն ուրախարար,
Որ տիրել է ամբողջ աշխարհք.
Բայց Բաքոսի պաշտողները
Բաւականանում չեն գինով,
Նոքա լցնում են փորները
Ոսմով, սպիրտով, գրոգով, ջինով
Նորան նուիրած մեհեաններում—
Պանդոկներում, գինետներում։

Այժմ քեզ եմ գիմում, մուսա,
Ով բարերար և շնորհատու,
Երգչին, թէ նա քեզ վրայ յուսայ,
Անօգնական չես թողնի դու։
Երգէն երեք տասնեակ տարի
Պատագ եմ ես, կամքիդ հնազանդ,
Թէպէտ լարերն իմ քնարի
Միշտ հնչեցրել չեմ ջերմեռանդ.
Թոքա համար և ստորոտում
Պարնաս լերան կամ ես տրտում։
Թոքա համար մինչև այսօր
Չէ զարգացում իմ ճակատը
Թափնէ պատկը փառաւոր,
Երգչի միակ վարձն ու գարդը.
Թոքա համար անյաջողութեան
Թատապարտուած է անունս,
Վախենում եմ մոռացութեան
Տրուի նոյնպէս և ամիսս,
Երբ որ նաւակը Քարօնի
Տանէ ինձ վայրը Պլուտոնի։
Մի՛ պատժիր իմ անհոգութիւնն,
Թանկութիւնը չէ հեռատես,
Չէի ապատում, թէ ծերութիւնն
Այսպէս շուտով կրգայ հանդէս.

Կարծում էի, երիտասարդ
Տարիների շարքն է անվերջ,
Միշտ կլինում առույգ ու գուարթ,
Հարն եռանդի կմնայ անշէջ.
Ինձ թվում էր, կայ գեռ ժամանակ,
Որ վաստակեմ փառք ու հռչակ:
Սակայն ահա ձիւնի նման
Սպիտակել է գլխիս մազը.
Էլ յոյս չկայ, որ մանկութեան
Իրագործուի իմ երազը.
Էլ չեմ ձգտում ականաւոր
Երգիչների հասնել փառքին,
Օգնիր գոնէ արժանաւոր
Կերպով վերջ տամ իմ առակին,
Որի վերայ, ոչ միշտ արի,
Աշխատել եմ քանի տարի:
Զնորհիր, մուսա, ինձ մի բաժակ
Կաստալիայի անույշ ջրից,
Որ նրբացնէ նա իմ ճաշակ,
Ոգևորէ, նոր ույժ տայ ինձ
Զարուեստակել սկսած վէպս
Եւ տալ շուտով յաջող վախճան.
Ապոլլոնը ինձ այն դէպս
Գուցէ կանչէ գալ իւր խրախճան:

Ապա բան տուր ինձ ձին Պէգաս,
Որ վեր թռչեմ լեառն Պարնաս։

Օլիմպոսի և Պարնասի
Հետ վերջացրի ես իմ բանը,
Էլ այդ մասին բառ չեմ ասի,
Անցնում եմ իմ պատմութեանը։
Յիշեցնում եմ քեզ, ընթերցող,
Երկրորդ գլխից քանի մի տող,
Որ Աստղիկը խնդրեց Հօրը
Պատել մինչև միւս օրը,
Եւ այդպէսով իւր աղջկան
Թոռնելու տալ ժամանակ,
Որ պատասխանը վճռական
Նա լաւ կշռէ ծանր ու բարակ։
Վարդան ազան միւս օրը վաղ
Զարթեց քնից և անյապաղ
Գնաց ժամը և ջերմեռանդ
Սրտով աղօթք արեց նա անդ։
Յետոյ ժամից երբ դարձաւ տուն,
Եւ Աստղիկի հետ հիմնաւոր
Խօսեց, ստացաւ ոչ հաստատուն
Պատասխան, այլ պայմանաւոր։

Ապա ծերը նոյն առաւօտ
Անձամբ գնաց իւր դրացու մօտ,
Եւ իւր աղջկայ կողմից նորան
Բերեց ահա այս պատասխան.

Թէպէտ վաղուց վճռել է նա
Կին չդառնալ երբէք մէկին,
Որ այդպէսով չհեռանայ
Նա ծնողից իւր թանկագին.
Խնամէ նորա ծերութիւնը,
Սփոփէ նորա տխրութիւնը,
Մինչև որ ձայնը Արարչի
Նորան իւր մօտ կանչել հաճի:
Այնուհետև այս աշխարհի
Հրապոյրներից հեռանալով,
Իրրև ժուժկալ միանձնուհի
Կուսանոցումը փակուելով,
Արտով մաքուր, հոգով զգաստ
Նա երկնային լոյս առագաստ
Ընդունելու արժանանայ,
Ննջեցեալին հարսնանայ.
Բայց յարգելով իւր հօր կամքը,
Ուրախութեամբ կըհաւատայ

Իւր ապագան և իւր կեանքը,
Ում որ Հայրը իրան կրտայ։
Միայն մի բան խնդրում է նա,
Որ փեսացուն նրան խոստանայ
Իւր տան մէջ մի փոքր և յարմար
Սենեակ սարքել նորա համար,
Ուր նա մենակ և անարգել
Հանգարտ սրտով կարողանայ
Գիշերները աղօթք անել,
Առաջ քան թէ քնելու գնայ։
Նա յոյս ունի, որ իւր փեսան,
Թէ որ սրտանց սէրում է նրան,
Մերժելու չէ այս պայմանը,
Թէ ուզում է գլուխ գայ բանը։

Ահ, ինչպէս քաղցր էր փեսային
Լսել նրանից այս խօսքերը,
Նրան թվում էր, թէ երկնային
Աւետիս է տալիս ծերը։
«Ընորհակալ եմ, Տէր իմ Աստուած»,
Կանչեց նա խիստ ոգևորուած,
«Որ լսելով աղաչանքս,
Կատարեցիր դու բաղձանքս։

Իմ յոյսերը քաղցր և անգին
Զանցան, իբրև լոկ երազներ,
Ինձ շնորհում ես քո երկրածին
Հրեշտակներից միները ընկեր։
Այսուհետև էլ ոչինչ բան
Պակաս չէ իմ երջանկութեան.
Վայելելով նորա սէրը,
Ուրախ կանցնեն իմ օրերը։
Չեմ նախանձի թագուորին,
Նստած ոսկէ աթոռի վրայ,
Ոչ էլ նորա փայլուն թագին.
Իմ թագն ու պսակը ես գտայ։
Ահա, հայրը իմ, քո աղջկան
Այս մատանին տար դու նշան.
Սա՛, որ ես բոլորովին
Համաձայն եմ նրա պայմանին։
Նորա ուզած սենեակը
Արդէն պատրաստ կայ իմ տանը,
Փոքրիկ, դուռը դէպի բակը,
Դէպի պարտէզ պատուհանը։
Երբ կամենայ առանձնանալ,
Հոգով Աստծոյ հետ միանալ,
Կարող է միշտ նա անարգել
Այնտեղ հանգիստ աղօթք անել։

Ես յարգում եմ նորա սրտի
Ստուածհաճոյ այդ զգացմունքը,
Սուրբ ազօթքով իմ ամուսնի
Հաստատ կրմնայ իմ տան հիմքը։
Երջանիկ եմ, որ նորա պէս
Բարեպաշտ կին կունենամ ես.
Նա երկնքի օրհնութիւնը
Իւր հետ կբերէ իմ տունը։
Այժմ գալով այն բանին, թէ
Անչափ ծանր է նորա համար
Հօրից բաժան ապրել, միթէ
Դորան չկայ ոչինչ հնար։
Քեզ յայտնի է, հայր պատուական,
Որ ես, իբրև օտարական,
Այս քաղաքում ոչոք չունիմ
Ինձ ազգական ու մտերիմ,
Զատ երջանիկ կըլինիմ ես,
Որ գեղեցիկ ամուսնուս հետ
Ես վաստակեմ մի հայր, քեզ պէս
Առաքինական գործում վարպետ։
Ահա այս է խնդիրքս առ քեզ,
Որ, յուսով եմ, թէ կըյարգես.
Համարելով ինձ քո զաւակ,
Ապրիր ինձ հետ մէկ յարկի տակ։

Անասելի ուրախութիւն
Զգաց իւր սրտում Վարդան աղան,
Երբոր իւր ճառը եռանդուն
Ընտանեաց փեսացու տղան։
Իրրև ծնող գորովագութ,
Որ մի միայն էր հետամուտ
Տեսնել իւր դուստրը բաղդաւոր
Ամուսնու հետ արժանաւոր,
Հասկացաւ, որ հենց իւր խնդրած
Աէկը կանգնած է իւր առաջ,
Որ իւր աղջկան տէր է ընտրած
Բաղդի կամքովը բարեհաճ։
«Օրհնած լինիս», ասաց, «որդի,
Միխիթարիչ դու իմ սրտի
Ուրախ եմ, որ քեզ պէս մէկին
Իմ Ատղիկը կըլինի կին։
Ես քո սիրուն ու խնամքին
Յանձնում եմ մի քնքոյշ ծաղիկ,
Յուսով եմ, այդ աւանդն անդին
Անշուշտ կանես դու երջանիկ։
Սիրիր նորան սիրով քնքոյշ,
Վարուիր հետը քաղցր և անոյշ,
Եղիր նորան տէր և պաշտպան,
Իրրև հրեշտակ մի պահապան։

Եւ ես կամ քեզ երաշխաւոր,
Որ չի լինի նա ապերախտ,
Սիրով կանէ քեզ բաղդաւոր
Եւ կըգարձնէ տունդ դրախտ։
Ես էլ ձեզնով միխիթարուած,
Կունենամ միայն այս խնդրուած.
Արժանացնէ կամք Աստեղծողին,
Որդիք, ինձ ձեր ձեռի հողին—
Ընդունում եմ քո հրաւէրը
Ապրել քեզ հետ մէկ յարկի տակ.
Ողորմած է ծերիս Տէրը,
Շնորհելով ինձ մի զոյգ գաւակ»։

—Միամիտ կնոջ, հայրը պատուական,
Լաւ կըպահեմ քո աղջկան,
Չեմ խնայի ես ոչինչ գոհ,
Որ ինձանից լինի նա գոհ։
Նա կըլինի իմ տիրուհին,
Եւ ես նորա ստրուկը հնազանդ.
Նա կըլինի իմ դիցուհին,
Ես նրա պաշտողը ջերմեռանդ։
Գրաւել նորա սրտի սէրը,
Ահա այժմ իմ միակ գերը։

Նա կրլինի իմ տան զարդը,
Մինչև կեանքիս գայ աւարտը։
Միայն խնդրում եմ, էլ չուշացնես
Տալ կատարումն իմ ըղձերին,
Աղջկանդ իմ սիրուն յանձնես,
Ապրեմ, մեռնեմ նորա ձեռին։
Թէ քո կողմից արգելք չկայ,
Ապա թող այս առաջիկայ
Ուրբաթ մեր պսակը կատարենք,
Ինչպէս որ ծէս է և օրէնք։

Ընթերցողնե՛ր, դեռ չէք տեղեակ,
Ինչ էր անունը փեսայի.
Յանգի համար, թէ թոյլ կըտաք,
Ես կանուանեմ նրան Եսայի.
Իսկականը ինձ չէ յայտնի,
Թէ չէ ինչ հարկ պահել գաղտնի։
Մարդուն անուամբ, իմ կարծիքով,
Ոչէտք է տալ պարտաւ կամ գով։
Անշուշտ շատ կան լաւ անուններ.
Արամ, Տիգրան, Վարդան, Ներսէս,
Որոնցով Հայ դիւցազուններ
Հին դարերում եկել հանդէս։

Քանիսն են կրում անուն Լևոն.
Ունինք անգամ Նապոլէօն,
Բայց մենք գիտենք իրանց անուան
Ճատ պարոններ կան անարժան
Այսպէս ուրեմն լոկ անուամբ
Պարդս ստանում չէ արժանիք,
Երբ մանաւանդ նա իր վարմամբ
Կրում է ճակտին վատութեան կնիք,
Բայց հերիք է այժմ այդ մասին։
Վերն ասացի. իմ հերոսին
Ես անուանում եմ Եսայի,
Թէպէտ անուն չէ դա Հայի։

Եկեղեցում, լուսաւորուած
Հարիւրաւոր մոմերով վառ,
Մեծ բազմութիւն է ժողովուած,
Անուշահոտ ծխում բուրվառ։
Բեմի առաջ Հարսն ու փեսան,
Նոցա դիմացը քահանան
Կատարում է խորհուրդ պսակի
Միր Եսայու և Սոսդկի։
Հարսի ճակտին հրեշտակային
Անմեղութիւն է դրոշմած,

Մարդիկ, որոնք անդ ներկայ են,
Նորա գեղումն են հիացած։
Վայելչակազմ նազ հասակը
Պսակի բարակ քողի տակը
Ահելի ևս է հրապուրիչ,
Կրկնապատիկ նազ ու գրաւիչ։
Լիքը կուրծքը հանդերձի տակ
Բարձրանում է հպարտ հպարտ,
Այն ինչ աչքերը սևորակ
Ցած են նայում հեզ ու հանդարտ.
Ո՞վ կրկարծէր, իմ ընթերցող,
Թէ փեսայի կողքին կանգնող
Օրիորդը մեզ լաւ ծանօթ,
Սիրուն Ասողիկն է վաւաշտ,
Որ հազիւ կայ քանի մի օր,
Իջաւ պարտէզը կամացուկ,
Սիրականի հետ տարփաւոր
Տեսակցութիւն արնց ծածուկ։
Բայց այդ թողնենք։—Երբ տէրտէրը,
Բռնելով նոր հարսի ձեռք,
Ասաց ձայնով հանդիսաւոր
Այս խօսքերը խորհրդաւոր.
«Առնում գձեռն Եւայի
Եւ տուեալ յաջն Ադամայ»...

Ուրախ թնդաց սիրտ՝ փեսայի,
Ցնցուեց Աստղիկը ակամայ։
Բայց ինչ էին նոքա մտածում
Այդ բոպէին, ես չեմ կարծում,
Ընթերցողներ, թէ ձեզ համար
Գուշակելը լինի դժուար։
Այդ պատճառով ձեր հաճութեամբ
Ես պահպանում եմ լռութիւն,
Յուսով եմ, որ տհաճութեամբ
Չէք պատժի իմ համեստութիւն։—
Ահա պսակի սուրբ խորհուրդը
Վերջացաւ և ժողովուրդը,
Առաջնորդուած նուագածութեամբ,
Գնաց փեսայի տուն ցնծութեամբ։

Երեք օր ու երեք գիշեր
Տևեց նոցա հարսանիքը.
Պատարկուեցան ոչ թէ շիշեր,
Այլ կարասներ գինով լիքը։
—Ահա այդպէս էին հնում
Մեր պապերը գինի խմում.
Ուրախութեան չիար սահման,
Ուրախութիւնն էր ամեն բան։

Կեր ու խումին յաջորդում էր
Նուագածութիւն և երգ ու պար,
Ապա կրկին պտտում էր
Գինու գաւաթն ուրախարար.
Եւ մէջ և մէջ ծիծաղ, կատակ,
Ուրախ գոչիւն և ազազակ.
Այդ բոլորը խնջոյքին ոյժ
Եւ հիւրերին տալիս աշխոյժ։
Զքնաղատես նորահարսի
Գեղեցկութիւնը հազուագիւտ
Տալիս էր անդ երգող դասի
Քաղցրանուագ երգերին նիւթ։
Կէսգիշերին երրորդ օրը
Հազիւ վերջացաւ բոլորը,
Եւ ցրուեցան իրանց տները
Եսայ՝ ազայի հիւրերը։
Եւ մեր յոգնած հարսն ու փեսան
Ուրախ էին, որ վերջապէս
Ննջարանում իրար տեսան
Միայնակ և երես երես։

Մենք էլ թողնենք նոցա հանգիստ,
Որովհետև յոգնած են խիստ.

Այս բոպէին նոցա համար,
Կարծես, թէ էլ չկայ աշխարհ։
Բայց քեզ և ինձ, իմ ընթերցող,
Մեզ էլ պէտք է հանգստութիւն,
Կրգայ մի օր բարեյաջող,
Կլուերջացնեմ իմ պատմութիւն։
Այժմ անել այդ չեմ կարող,
Հազիւ շարում եմ տողին տող.
Անշուշտ ինքդ էլ ես նկատում,
Էլ յանգը ինձ չէ հնազանդում։
Ժամանակին դագաթելով,
Կանես ոյժի տնտեսութիւն,
Ես էլ այս գլուխը կնքելով,
Ասում եմ քեզ «ցտեսութիւն»։

Ե.

Սայ՝ աղան իր սիրունիկ
Կնոջ հետ ապրում է բաղդաւոր,
Նա ուրախ է, գոհ, երջանիկ,
Չէ ոչոքին նախանձաւոր։
Նախանձելին է նա ինքը.
Նորան շնորհել է երկինքը,
Իրը ամուսին, ոչ թէ մի կին,
Այլ թէ հրեշտակ մի հողածին։
Զքնաղ Սատղիկը իր մարդուն
Նուիրում է սէր ու յարգանք,
Միշտ ժպիտով քաղցր ու զուարթուն
Առնում համբոյր ու փայփայանք։

Հիացած է Ծսայ՝ ազան
Իւր ամուսնովը արմազան,
Որ հեզ է, իբր գառնուկ անմեղ,
Հոգին մաքուր, իբրև բիւրեղ,
Սիրտը փափուկ, զգայուն, բարի.
Իւր ամուսնուն հլու հնազանդ,
Տանը տիկին ժիր և արի,
Իբրև մշակ մի ջերմեռանդ։
Մարգու կամքը նորա համար,
Կարծես, օրէնք է փրկարար.
Ծառայելով նրա հաճոյքին,
Միշտ նայում է աչք ու յոնքին։
Մի զարմանար, իմ ընթերցող,
Ստղիկ տիկնոջ այդ վարմունքին.
Դրանով խաբել մեզ չէ կարող,
Մենք ծանօթ ենք նրա գաղտնիքին.
Նա ուզում է յիմարացնել,
Մարդուն, նրա աչքը շլացնել,
Եւ, ի հարկէ, նպատակին
Հասաւ, իբրև խորամանկ կին։

Պսակի ամիսը անգրանիկ
Անշուշտ է շատ անուշահամ,

Որ տալիս են Եւրոպացիք
Նորան անունը մեղրահամ,
Այսինքն քաղցր մեղրի պէս.
Եւ թէ իրաւ է այդ այդպէս,
Կարճատև է երջանկութիւնն,
Որ տալիս է ամուսնութիւնն:
Որովհետև եթէ այդքան
Քաղցր է սկիզբն ամուսնութեան,
Ապա անշուշտ յետոյ կրգան
Օրեր վշտի և դառնութեան:
Ես կարծում եմ, այդ սխալ է,
Այդ մասին իմ հայեացքն այլ է:
Ամուսնութիւնն, իրրև վիճակ,
Միշտ պիտի՝ լինի միատեսակ.
Բայց եթէ պէտք է անհրաժէշտ,
Որ բաժանենք շրջանների,
Աւելի ևս յարմար է, հեշտ
Եւ բնականից էլ չէ հեռի,
Ասենք, որ նա տարուայ նման
Ունի չորս այլ և այլ շրջան.
Ամուսնութեան սկիզբն է գարուն,
Փնքոյշ սիրով միշտ զարդարուն,
Հրաշալի և քաղցր եղանակ,
Կարծես դրախտի մէջ փափկութեան

Անց են կենում այդ ժամանակ
Սկզբի օրերն ամուսնութեան.
Յաջորդում է նորան ամառ,
Սէրն աւելի ջերմ է ու վառ.
Նորա պտուղը թանկագին
Հասնում է այդ եղանակին.
Ապա գալիս է պտղառատ
Եւ օրհնութեամբ լիքը աշուն,
Ամուսնական սէրն անարատ
Ստանում է իւր վարձն այդ պահուն.
Այնուհետև թող գայ ձմեռ,
Երբ բնութիւնն է կիսամեռ,
Թարդուն ու կնոջն արծաթահեր
Կրտաքացնէ փոխադարձ սէր։

Իմ նորապսակ հերոսների
Պսակի ամիսը անդրանիկ
Նկարագրել ինձ չեմ ների,
Ոչ թէ, որ դա է մի գաղտնիք,
Այլ պատճառն այն է, որ ինքս
Չեմ կատարել հարսանիքս
Եւ մնացել եմ ամուրի
Ինչպէս մենակ կանգնած ուռի։

Այդ պատճառով և գաղափար
Անգամ չունիմ ես այն մասին,
Թէ ինչով մեղր է կամ շաքար
Սկզբի ամիսն հարս ու փեսին:
Միղաւոր չեմ ես այդ բանում,
Միղաւոր ձեզ եմ անուանում,
Հայ սիրունները, պարկեշտասուն,
Սրտով բարի, մտքով հասուն,
«Որոնց թշին վարդ է բացուել,
«Սպիտակ ճակտին մի շուշան,
«Փալտը բերնից ցած չէ գալիս,
«Անմեղութեան է նշան».
Ինչպէս երգում է ձեր մասին
Նա, որ երգեց «Պայր Արաքսին»:
Որոնց գեղով յափշտակուած,
Որոնց սիրով ոգևորուած,
Մի այլ սակաւ յայտնի երգիչ,
Այժմ մոռցուած բոլորովին,
—Որովհետև երգեց նա քիչ—
Նուիրեց սիրուն երգ ձեր գովին,
Երբ նա պանդուխտ, օտար երկրում
Ձեզ կարօտով միտն էր բերում.
Մոլորուած էր ու չգիտէր,
Հրեշտակ, թէ մարդ ձեզ անուանէր.

Որ ձեր սէրը սրտում պահած,
Միայն նորանով էր կենդանի,
Յուսով էր, թէ կեանքն իւր մաշուած
Միայն ձեր սէրը կըպահպանի։ —
Ես էլ, թէև ոչ անուանի
Երգիչ, ձօնել եմ մի քանի
Երգեր ձեզնից մէկին, միսին,
Խոստովանել սէրս երկուսին,
Սակայն բոլորն էր միայն գուր ջանք.
Զզգաց դէպ՝ ինձ և ոչ մինը
Համակրութիւն, սէր ու տենչանք
Ու չեզաւ իմ ամուսինը։
Այսպէս ահա անմխիթար
Ես ապրում եմ ամբողջ կէս դար.
Մի՛ վշտանաք ուրեմն ինձնից,
Որ գանգատվում եմ ես ձեզնից։

Երբորդ ամիսն է գնում արդէն,
Ինչպէս Ստեղիկն ու Եսային
Բաղդաւորուած կին ու մարդ են,
Իրոք, թէ բան երևոյթին,
Այդ մի և նոյն է մեզ համար,
Պանաւանդ որ է շատ գժուար

Միշտ իմանալ այն գաղտնիքը,
Որ թագցնում են մարդ ու կնիկը։
Այդ այնպէս է ոչ միայն հիմա,
Այդպէս եղել է և հնում,
Արդ ներկայից ուրեմն իմա.
Նոյնը կըլնի ապագայում։
Բայց անցեալը գնաց, չկայ,
Ապագան էլ դեռ պիտի գայ.
Ներկան է ինձ հետաքրքրում,
Թէպէտ և հին առակ եմ գրում։

Բայց այս ներկան, ո՛վ Արարիչ,
Որքան տգեղ է ու ցեխոտ,
Ինչպէս փտած, կեղտոտ ճահիճ,
Ապականուած ու գարշահոտ։
Սրբազան կապն ամուսնութեան
Խզուած է այժմ, և շնութեան
Մնացել է լայն ասպարէզ.
Ամուսինները առ երես
Սիրով ապրում են իրար հետ,
Իրար հետ հաշտ են, մտերիմ,
Իրար կեանքով երդվում, թէպէտ
Ամենքը չեն հաւատարիմ։

Մտէք պարտէզը «Եւրոպա»,
Երբոր այնտեղ «մասկարադ» կայ,
Գնացէք «Վագա» և «Մուշտաիդ»,
Միւս պարտէզները ստուերախիտ,
Ուր բազմաթիւ գալար հիւղեր
Պատապարում են գեղեցուիթիւնն,
Ուր վատնում են տներ, գիւղեր
Եւ թանկագին առողջութիւնն
Մեր պատուելի քաղաքացիք,
Երիտասարդ և ծեր մարդիք,
Թէ փողաւոր վաճառական
Եւ թէ կրթուած ազնուական,
Որոնց մասին, ում որ հարցնես,
Ունին ամենքը լաւ կարծիք,
Համարելով ընդհանրապէս
Վարքի կողմից անբիծ մարդիկ:
Ահա դոքա գիշերն ի բուն
Անց են կացնում այնտեղ անքուն
Լկտի կանանց հետ միասին
Եւ տուն դառնում արշալոյսին:

Այր մարդկանցից անհամեմատ
Բարձր են վարքով նոցա կանայք,

Ողջախոհ են և անարատ
Դեռ մեծ մասը մեր հայ տիկնայք,
Թէև, ի հարկէ, այնպէս չեն,
Ինչպէս գովում է Եղիշէն,
Որ Հինգերորդ դարում ապրող
Կանանց ձօնում է իւր ներբող։
Ժամանակը հետզհետէ
Փոփոխում է վարք ու բարքը,
Չլինէր այդ այդպէս եթէ,
Ինքս կըմնար այս աշխարհքը։
Կար երբեմն, որ հայ կինը
—Գիտէ մեզնից ամեն մինը—
Դուռն ճեղքից դարս ու ծածուկ
Դուրս էր նայում զգոյշ, կամացուկ,
Իսկ փողոցում պատահարար
Թէ հանդիպէր տղամարդուն,
Աչքը ձգած դէպի խոնարհ
Կարմրելով շտապում էր տուն,
Կամ երեսը դարձնում պատին,
Իսկ իւր քամակը անցորդին։
—Իմ ընթերցող, դու այդ դժուար
Թէ անուանես քաղաքավար։

Այն ինչ հիմա ամենուրէք
Դուք կըտեսնէք հայ կնոջը
—Հին պատկառանք, պարզ կեանք, ուրէք—
Քաշ է տալիս երկար պոչը
Նոթատարաց իւր հանդերձի
Եւ քամակը, կասես զէր ձի,
Ուռցնում է, ինչպէս բլուր,
Անուանելով զարդն այդ «տուրնիւր»։
Այժմ ոչ միայն չէ ծածկում նա
Այլ մարդկանցից իւր երեսը,
Այլ թէ խնջոյք կամ «բալ» գնայ
Մերկացնում է մարմնի կէսը։
Այո՛, այլ է ժամանակը,
Այլ և կեանքի եղանակը,
Ինչոր առաջ էր յարգելի,
Այժմ համարվում է ծաղրելի։
Եւ մեր կանայք իրանց գաբից
Աշխատում են չմնալ յետ,
Որ համարուին ոչ օտարից
Նոքա անկիրթ, կոպիտ, տգէտ,
Էլ առաջուայ կրաւորական
Գերով նոքա չեն բաւական,
Այլ այր մարդկանց հետ հաւասար
Պահանջում են իրանց համար

Նոքա պէս պէս իրաւունքներ
Եւ հեշտութեամբ իրացնում են,
Նոր հայեացքներ ու սկզբունքներ,
Երբեմն չափից էլ անցնում են:
Եւ պատուէրը մոմխիսական,
Որ ասում է. «ակն ընդ ական
Եւ ատամն ընդ ատամանն»,
Կատարում են ճիշտ, անպայման:
Այդ պատճառով և մեզանում
Ճում է այն կանանց թիւը,
Որոնք ատնակոխ են անում
Իրանց տղամարդկանց պատիւը.
Մինչ մարդիկ դուրսն են գուարճանում,
Նոյնը կանայք տանն են անում.
Եւ այդպէսով նոքա միմեանց
Առաջ լինում են պարտապանց:
Կան այժմ կանայք—ինքս եմ վկայ—
Լուսաւորուած թէ շատ, թէ քիչ,
Երբ որ մարդիկն են բացակայ,
Հրաւիրում են մխիթարիչ.
Ճանաչում եմ նոյնպէս մէկին,
Որ ունևոր մարդու է կին,
Նա գործ է դնում ինքնահնար
Մարդու սիրուց խոյս տալու հնար.

Երբ քաղաքից ամառվնը
Հեռացած է ամիսներով,
Այդ միջոցին նրա տիկինը
Զբաղուած է իւր սիրոցներով,
Բայց երբ մարդը վերադառնում,
Իսկոյն կինը Հիւանդանում,
Եւ ամեն օր մանկաբարձը
Այցելում է, ստանում վարձը։

Բայց Հեռացայ խօսքից դարձեալ
Եւ սկսեցի երկար բարակ
Քննել ներկան, մինչդեռ անցեալ
Ժամանակի գրում եմ առակ։
Ինքս էլ դժգոհ եմ այդ բանից,
Բայց չեմ կարող զսպել ինքս ինձ,
Թէև դրանով, ես լաւ գիտեմ,
Դրգռում եմ շատին իմ դէմ։
Թէպէտ, իբրև լուսանկար,
Պատկերացնում եմ ես ներկան,
Սոսրագրելով գրչով տկար,
Ինչպէս որ է ինքն առարկան.
Բայց յայտնի է, առ Հասարակ
Ճշմարտութեան միշտ Հակառակ

Է մարդկային բնութիւնը,
Եւ այս խօսքի ստուգութիւնը
—Ընշուշտ գիտէ ընթերցողը—
Պարտական ենք հին առածին.
«Ճշմարտութիւնը ասողը
Պէտք է պատրաստ ունենայ ձին»։
Ինձ փախչելու չկայ հնար,
Պատրաստ չունիմ ես երիվար,
Ապա խնդրում եմ ներեն ինձ,
Որոնք գժգոհ են ինձանից։
Նոցա առաջ իմ յանցանքը
Միայն այսքան է, ոչ աւելի
Որ նոցա ճիշտ կերպարանքը
Ցոյց տուող ունիմ ես Հայելի։
Բայց որպէս զի չզայրացնեմ
Նոցա, լաւ է նորից անցնեմ
Իմ առակին և աշխատեմ,
Յաջորդ գլխովը աւարտեմ։

Ուրեմն Եսայ՝ն և իւր կինը
Ապրում էին շատ բաղդաւոր,
Չէր նոցանից և ոչ մինը
Իւր վիճակից գանգատաւոր.

Իրար սիրում, իրար յարգում,
Քիչ կըգտնուի այս աշխարհքում
Նոցա նման մարդ ու կնիկ,
Իրարով գոհ և երջանիկ։
Գոնէ այդպէս էին կարծում,
Ով որ ծանօթ էր նոցա հետ,
Ոչ միայն ոչոք չէր նախանձում
Նոցա բաղդին ու նայում խէթ,
Այլ թէ օտար, թէ ընտանի
Նոցա տալիս էր երանի
Եւ ցանկանում էր, որ լինի
Նոյն բաղդին և ինքն արժանի։

Հերոսներիս ընտանեկան
Կեանքն էր խաղաղ և անվրդով.
Ասայ՝ն սիրում էր իւր կնկան
Բոլոր հոգով, բոլոր սրտով,
Նաև Աստղիկը իւր կողմից
Կարծես թէ էր նրան զգայակից,
—Թէև գաղտնիք չէ մեզ համար
Որ նա ունէր մի սիրահար։—
Առաւօտից մինչև մութը
Ասայ՝ն լինում էր խանութում,

Երբեմն մինչև ժամը ութը,
—Այնտեղ էր նա իր ճաշն ուտում—
Ապա յոգնած գալիս էր տուն
Եւ վայելում հանգստութիւն
Իր գեղեցիկ կնոջ գրկին,
Եւ անձնատուր քնքոյշ կրքին,
Ձրթունքները վարդակարմիր
Իր ամուսնու չքնաղադէմ
Համբուրում էր նա անձանձիր
Եւ երազում իր տունն Եդեմ։
Այսպէս սիրոյ թեւերի տակ
Անցնում էին ժամերն արագ,
Մինչև ծառան յայտնէր կամաց,
Թէ պատրաստ է իրիկնահաց։
Սովորաբար երեք հոգով
Աստղիկն, Եսայն, Վարդան ադան,
Եթէ չկար հիւր նոցա քով
Նստում էին հացի սեղան։
Աստղիկ տիկինն ընթրիքից յետո
Հեռանում էր իսկոյն և եթ
Նախ իր սենեակն աղօթելու,
Ապա թէ գնում էր քնելու։

Աստղիկ տիկնոջ աղօթարանն
Էր մի փոքրիկ, մաքուր սենեակ,
Յարմարաւոր առանձնարան,
Ամեն կողմից համարեա փակ։
Բակի կողմից ունէր մի դուռ,
Որ փակվում էր ներսից ամուր,
Պատուհանը վանդակապատ
Նայում պարտէզը ցանկապատ.
Ծառեր, թփեր նրբանկար
Նորա պատերն էին զարդարում,
Կրկարծէիր մի փոքրիկ վայր
Էր այդ սենեակը անտառում.
Առաստաղը կապոյտ ներկած,
Երկնքին էր նմանեցրած,
Վրան ոսկէզօծ և լուսաւոր
Փայլում աստղեր հարիւրաւոր։
Եւ յատակը հարթ ու ողորկ
Մարմար քարից, ոչ հասարակ,
Ծածում էր մի կակուղ մեծ գորգ,
Ինչպէս թաւիշ նուրբ ու բարակ.
Չկար ոչինչ կահ կարասիք
Այդ սենեակում փոքր ու գողտրիկ,
Միայն պատի մօտ արևելեան
Կանգնած էր մի փոքրիկ սեղան,

Որի վերայ երկու երեք
Գարսած էին փառակազմ գիրք.
Սազմոս Դաւթի, կողքին Նարեկ,
Ուեսարան և Ժամագիրք։
Ահա այստեղ մարդու հետ հաշտ
Ասողիկ տիկինը բարեպաշտ
Հեռանում էր աղօթելու,
Նախ քան գնում էր քնելու։
Բայց աղօթքն էր լոկ պատճառանք,
Սիրուն Ասողիկն այդ միջոցին
Վայելում էր սէր ու տարփանք
Իւր Վահանի քնքոյշ ծոցին,
Մինչ Եսային գլուխը բարձին
Սպասում էր կնոջ վերադարձին,
Որ գեղեցիկ իւր ամուսնուն
Գրկած մտնի նա անոյշ քուն։

Երեք ամիս այդպէս անցաւ,
Գուցէ փոքր ինչ էլ աւելի,
Մինչև Եսայ՝ն մեր իմացաւ
Կնոջ արարքը պարսաւելի։
Որովհետև ո՞վ չգիտէ
Հասարակաց առածը, թէ

Կնոջ մեղքերը միշտ վերջինը
Իմանում է ամուսինը։
Մի օր նորա հարևանը
Իբրև գաղտնիք յայտնեց նորան,
Թէ գիշերները նրա տանը
Մէկն այցելում է նրա կնկան։
Ապշած մնաց խեղճ Եսային,
Երբ իմացաւ դժոխային
Նենգութիւնը նա իւր կնոջ.
Պիտ՝ հաւատա՞ր, արդեօք, թէ ոչ։
Զէ՞ որ Աստղիկը սիրում էր
Նորան անկեղծ ու ջերմագին,
Փայփայելիս անուանում էր
Իւր ամուսինը թանկագին,
Զէ՞ որ նա հեզ էր ու պարկեշտ,
Միթէ կարո՞ղ էր այդպէս հեշտ
Իւր պատիւը նա մոռանալ,
Այդչափ ընկնել ու ստորանալ։
«Ո՛չ», ասում էր նա ինքն իրան։
«Անկարելի է այդ բանը,
Թշնամի է գուցէ նորան,
Կամ սխալվում է հարևանը.
Սակայն խախտուեց իմ հաւատը,
Պիտ՝ իմանամ լաւն ու վատը,

Պիտ՝ իմանամ, արդեօք իրաւ
Կինս փարվում է անիրաւ.
Թէ միմիայն չար նախանձից
Դրդած, գրացիս է հետամուտ
Բաժնել ինձ իմ կնոջ անձից,
Եւ հնարում է նա սուտ ու մուտ։
Ամեն բանին կայ հնար ու ճար.
Այս իսկ գիշեր ես անպատճառ
Պիտ՝ փարատեմ իմ կասկածը,
Ստուգեմ գրացուս հաղորդածը»։

Երեկոյեան եկաւ նա տուն
Ուրախ, ինչպէս սովորաբար,
Սիրուն Ստեղիկը իւր մարդուն
Դիմաւորեց մտերմաբար,
Փարուեց նորա պարանոցին,
Սխմեց նրան իւր փափուկ ծոցին,
Եւ համբոյրներ ջերմ, անընդհատ
Դրոշմեց դէմքին առատ առատ։
«Իմ սիրելի՛, իմ թանկագին,
Քիչ ուշացար այսօր կարծես,
Գիտես, որ քեզ կարօտագին
Ամբողջ օրը սպասում եմ ես.

Երբ հեռու ես դու ինձանից
Բոպէն տարի է թվում ինձ».
Կանչեց Աստղիկը և կրկին
Համբուրեց ու սխմեց գրկին։
Նաև Եսայ՚ն, թէև որտում
Բուն էր դրել սև կասկածը,
Չէր երևում մռայլ և որտում,
Որ չմատնէ իւր զգացածը.
Նա իւր կնոջ փայփայանքին
Պատասխանեց եռանդագին
Եւ համբուրեց նրա այտերը.
Մի խօսքով լաւ խաղաց դերը։

Երբ Աստղիկը առանձնացաւ
Ընթրիքից յետ իւր սենեակը,
Հազիւ թէ հինգ բոպէ անցաւ։
Զգոյշ դուրս եկաւ Եսայ՚ն բակը,
Ձեռին բռնած մի գաւազան,
—Ցարմար էր աստ յանգ աւազան—
Եւ կամացուկ ու ուղղակի
Թօռեցաւ դռանն այն սենեակի։
Եսայ՚ն կամաց հրեց դուռը.
Բայց չբացուեց, ներսից փակ էր.

Գուցէ սուտ էր գրացու լուրը,
Գուցէ Աստղիկը մենակ էր,
Գուցէ նա այժմ, ծունկ խոնարհած,
Աղօթում էր բազկատարած,
Խնդրում Աստծուց իւր ապերախտ
Մարդու համար երկար կեանք, բաղդ։
Իսկ նա ինքը—ամօթ իրան—
Ի՞նչ է անում այդ ժամանակ,
Իւր ամուսնուն սարդում դարան,
Ինչպէս մի գող և աւազակ։
Եթէ յանկարծ գուռը բանայ,
Դուրս գայ Աստղիկը, իմանայ
Իւր մարդու չար նպատակը,
Ի՞նչ կասէ նրան այն հրեշտակը։
Ի՞նչ երեսով պիտի նայէ
Նա իւր կնոջ լոյս երեսին.
Էլ կըսիրէ, կրփայլիայէ
Կինը նրա պէս սեւերեսին։
Արդեօք լաւ չէ՞, որ հեռանայ,
Քանի գեռ չէ գուրս եկել նա։—
Ականջ դրեց, ներսը լուր էր։
«Այ՛, լսածս սուտ լուր էր,»
Փոսածեց նա և հենց ուզեց
Գնալ, մի վայրկեան չանցաւ միջոց,

Դռան ետևից յանկարծ լսուեց
Ուրախ ծիծաղ ու պաչպչոց։
Ցայ՛ն, նորից կանգնեց սառած,
Եւ ականջները սուր լարած
Լսում էր նա, ինչպէս ներսը
Խօսակցում էին երկուսը.
Մէկը Աստղիկն էր իւր կինը,
Կեղծ բարեպաշտն ու անամօթ,
Ձայնը նրա հետ խօսակցինը
Այր մարդու էր, բայց անծանօթ։

«Աստղիկ, սրտիս թագուհի դու,»
Ասում էր ձայնը տղամարդու.
«Ա՛խ, մինչև երբ պիտ՝ դու և ես
Տեսնենք իրար գողերի պէս։
Ինչի՞, իրրև ծանր յանցանք,
Պիտի թագցնենք մենք մեր սէրը,
Սիրով կապուած ուրախ անցանք
Մենք մանկութեան մեր օրերը։
Մեզ երկուսիս իրար համար
Ստեղծեց երկինքը բարերար,
Նա վառեց մեր սիրտն ու հոգին
Սիրով բորբոք ու կաթոգին։

Բայց քեզ ինձնից խլեց Եսային,
Ասելի է ինձ այդ անձը,
Եւ ինչպէս դև դժոխային
Հոգիս տանջում է նախանձը։
Էլ չեմ կարող ես աւելի
Տանել վիճակս անտանելի,
Էլ չեմ կարող իմ Աստղկին
Թոյլ տալ լինել ուրիշի կին։»

—«Ա՛խ, իմ Վահան, ճշմարիտ է,»
Պատասխանեց մեր սիրունը,
—Ընթերցողս արդէն գիտէ,
Ով էր կրում այդ անունը—
«Անտանելի է, անբնական
Մեր դրութիւնը, իմ սիրական.
Ինքս էլ արդէն, հաւատա՛ ինձ,
Զանձրացել եմ իմ կեղծ դերից։
Կեղծաւորուել ամենայն օր
Ու ձևանալ սիրահարուած,
Մինչ իմ իղձն է, որ երկնաւոր
Տէրն ամուսնուս տար մի հարուած
Եւ ազատէր ինձ այդ հրէշից,
Այդ բարեսիրտ, չիմար էշից,

Որի գագիր փայփայանքը
Միայն դառնացնում է իմ կեանքը։
Բայց ինչ արած, իմ սիրելի,
Պիտի տանենք համբերութեամբ
Մեր վիճակը անտանելի,
Վարուինք խելքով ու զգուշութեամբ,
Մինչև գտնենք միջոց ու հնար
Ուղարկել նրան այն միւս աշխարհ,
Որտեղից չէ վերադարձել,
Ով մի անգամ այնտեղ գնացել։»—

«Ես գտել եմ այդ հնարը,
Ահա այստեղ ունիմ պատրաստ»,
Պատասխանեց սիրահարը.
«Միայն պէտք է մեզ լինել ըզգաստ,
Եւ կրհասնենք նպատակին։
Այդ ինձ տուեց մի գնչու կին,
Որ շատ ճարպիկ է և հմուտ
Կախարդութեան արհեստում մութ։
Տեսնում ես այս հեղանիւթը,
Ոչ գոյն ունի, ոչ համ, ոչ հոտ
—Ինչ որ խոտի է սա հիւթը,
Բայց անունն է ինձ անծանօթ—

Սաստիկ է սրա զօրութիւնը,
Եւ հաղուագիւտ յատկութիւնը.
Չուտ է սպանում, չէ թողնում հետք,
Մեզ էլ այդպէս մի ճար է պէտք։
Երկու կաթիլ կերակրի հետ,
Կամ թէ գինու բաժակի մէջ,
Առանց ցաւի խեղդն և եթ
Նորա կեանքին կըգնեն վերջ։
Այնուհետև ազատ ես դու,
Միակ ժառանգը քո մարդու,
Եւ մի միջոց անցնելուց յետո,
Կըպսակուինք մենք իրար հետ»։

—«Շատ լաւ, Վահան, տուր ինձ։ Վաղը
Կըփորձեմ դրա զօրութիւնը,
Թէ յաջողեց մերն է խաղը,
Ապահովուած մեր դրութիւնը,»
Ասաց Ստողիկը վճռապէս։
«Սակայն հիմա պիտի շտապես,
Իմ Վահանիկ, շուտ հեռանալ.
Էլ չեմ կարող երկար մնալ
Այստեղ։ Վայ թէ մարդս յանկարծ
Ուշանալուս կասկած տանէ,

Կորած է մեր յոյսը անդարձ,
Եթէ ինձ մօտ քեզ գտանէ։»—

«Բարի գիշեր, իմ սիրունիկ»
Ասաց Վահանը երջանիկ.
Եւ մի բոպէ հագիւ անցաւ,
Սենեակի դուռը բացուեցաւ։
Երևեցան դռան շէմքին
Սիրահարները զուարթադէմ,
Մեռելի գոյն փռուած դէմքին,
Ասայն կանգնած էր նոցա դէմ։
Ձէաց Աստղիկը սարսափած
Եւ վայր ընկաւ ուշաթափած։
Ասայն քաշեց գաւազանը,
Սակայն ճարպիկ էր Վահանը,
Մի կողմը թռաւ և վազէվազ
Լայնատարած անցաւ բակը,
Եւ ապահով ու անվնաս
Դուրս վազեց նա հրապարակը։
Թալկացած կնոջը Ասային
Ուշ չդարձրեց ամենևին,
Եւ գաւազանը շարժելով
Հայհոյելով, անիծելով,

Վազեց ինքն էլ, որ Վահանին
Հասնի և իւր վրէժը հանէ,
Փատնէ նրան իւր գաւազանին,
Գլուխը ջարդէ ու սպանէ։...

Զ.

Այն միջոցին, երբ Եսային
Հալածում էր իւր ոսոխին,
Տարօրինակ շփոթ էր տիրում
Քաղաքի մութ փողոցներում։
Լսվում էր ճիչ և աղաղակ.
Արդեօք ինչ էր դրա պատճառը,
Թշնամին էր մտել քաղաք,
Թէ հրկիզվում էր տաճարը։
Եւ ոչ մէկն էր այդ երկուսից,
Ոչինչ վտանգ չկար դրսից,
Ոչ էլ սպառնում էր քաղաքին
Հրդեհի վնասը ահագին։

Զփոթի պատճառը ուրիշ էր,
Ահա ասեմ քեզ, ընթերցող,
Գանձարանիցը այն գիշեր
Յափշտակել էին շատ փող,
Եւ ամեն կողմն արագ արագ,
Թէ ձիաւոր, թէ հեռւակ
Ընթանում էին շատ զինուորներ,
Կասկածաւոր մտնում տներ,
Որոնելով արքունական
Գանձի յանդուգն գողերին։
Նոցա թուեց փախստական
Մէկը Եսայ՝ն փայտը ձեռին,
Եւ ձայն տուին ամեն կողմից.
«Ահա մէկը այն գողերից։
Բռնէր, կապէր»։ Զուրջ պատեցին
Մեր Եսայուն ու կապեցին։
«Խոստովանիր քո յանցանքը»,
Գոռաց նրա վրայ մեծաւորը,
«Թէ չես ուզում, որ տանջանքը
Յոյց տայ, ով է յանցաւորը.
Մի՛ ուրանար, չես խաբի ինձ,
Անշուշտ մէկն ես դու այն խմբից,
Որ կողոպտեց գանձարանը,
Եւ քեզ սպասում է պարանը»։

—«Չեմ ուրանում, ես եմ գողը,»
Պատասխանեց մեր Եսային.
Զգարմանայ ընթերցողը
Իմ հերոսի պատասխանին։
Երկինք, գետին վկայ կանչէր,
Ոչոք նորան հաւատալու չէր,
Թէ գողութեան մէջ արքունի
Գանձարանից մասը չունի։
Ինքը յուզուած, դէմքը գունատ,
Վրդովմունքից շնչասպառ,
Իւր դիմացի մարդուն նա շատ
Կասկածելի պիտ՝ երևար։
Այդ պատճառով ոչինչ տրտունջ
Չյայտնեց նա, մնաց անմռունչ.
Զինուորները նրան մէջն առան
Եւ քաղաքի բանտը տարան։

Միւս օրը առաւօտը
Մեր կարծեցեալ յանցաւորին
Զղթայակապ ձեռն ու ոտը
Ներկայացրին թագաւորին։
Վեհապետի դէմ ալէգարդ
Կանգնած էր մեր Եսայ՝ն հանդարտ,

Նրա աչքերին նայում վստահ
Եւ չէր զգում իւր սրտում ահ.
Որովհետև յոյս ունէր նա,
Ոչ միայն իւր անձն արդարացնել,
Այլ թէ պիտի կարողանայ
Արդարութեան ձեռը յանձնել
Ամբողջ խումբը այն գողերի,
Որոնք երեկ թագաւորի
Գանձարանից յանդգնաբար
Փախցրել էին մի մեծ գումար:

«Ա՛յ մարդ, դո՞ւ ես գանձիս գողը»,
Հարցրեց նորան ծեր իշխանը,
«Սա՛, ո՞ւր ես թագցրել փողը,
Եւ ո՞վ էր քո օգնականը:
Յանցանքդ չէ գործ մէկ մարդու,
Գործակիցներ ունէիր դու.
Ո՞վքեր են քո ընկերները,
Յայտնի՛ր նոցա անունները:
Թէ բոլորը մէկիկ մէկիկ
Այս բոպէին խոստովանես,
Խոստանում եմ կրկնապատիկ
Պատիժդ կը մեղմացնեմ ես.

Ապա թէ ոչ, լաւ իմանաս,
Քեզ սպասում է խիստ պատուհաս.
Կախաղանի վրայ կըփթիս,
Ագռաւները կուտեն քո միս»:

—«Երկար ապրի՛ թագաւորս,
Նորա թուրը լինի կտրուկ,
Ոտիդ հողն եմ մեղաւորս,
Դու իմ տէրը, ես քո ստրուկ,»
Ասաց Եսայ՚ն հանդարտ ու հեզ.
«Վերև Աստուած, ներքև դու ես,
Կըյանգգնի՛մ ես քո առաջ
Խօսել կամ սուտ, կամ վայրահաճ:
Խոստովանում եմ, որ մենակ
Ես չեմ գողը քո փողերի,
Բայց չգիտեմ ես խայտառակ
Անունները միւս գողերի,
Ընկերներին իմ անզգամ,
Չեմ ճանաչում մինչև անգամ,
Բայց կարող եմ ես բոլորին
Վաղը յանձնել դատաւորին:
Հրամայիր, տէր, տանեն ինձ ժամ
Վաղն առաւօտ պատարագին,

Ընտեղ մէկ մէկ ես ցոյց կրտամ,
Ով մասն ունի իմ յանցանքին։»—

«Սուտ ես ասում, թշուառական»,
Ահեղ ձայնով կանչեց արքան,
«Չեմ հաւատում քո խօսքերին.
Քեզ կրմատնեմ գահճի սրին,
Թէ մի բոպէ մինչև անգամ
Զարունակես քո ստութիւնն,
Եւ չյայտնես յօժարակամ
Ինձ կատարեալ ճշմարտութիւնն։
Ես պահանջում եմ քեզանից,
Իսկոյն մէկ մէկ անուանես ինձ
Քո յանցաւոր ընկերներին,
Գանձիս յապուգն գողերին։
Հասկանում եմ քո միտքը չար,
Սակայն ունայն է քո յոյսը,
Թէ սուտ խօսիս, չկայ քեզ ճար,
Էլ չես տեսնի վազուայ լոյսը»։

—«Երկայնամիտ եղիր, արքայ,
Սուտ չեմ խօսում Աստուած վկայ,»

Ասաց Եսայ՝ն պաղատագին.
«Եթէ վաղը պատարագին
Եկեղեցում չցոյց տամ ես
Իմ մահապարտ ընկերներին,
Պապուհասիր, ինչպէս կուզես.
Չէ՞ որ իմ կեանքն է քո ձեռին։
Թէ ասածս չհաստատեմ,
Միայն մէկ օր պիտ՝ աշխատեմ,
Ոչ աւելի։ Խօսել չարժէ.
Այսօր խնայէ՛, վաղը պատժէ։»—

Թագաւորի դէմքին խաղաց
Մի ողորմած թեթև ժպիտ,
Կալանաւորը երևաց
Նրան զուարճախօս ու սրամիտ։
«Զմտա լաւ», ասաց, «մինչև վաղը
Զարուն՝ակիր դու քո խաղը.
Կըտեսնենք, թէ ինչ աստիճան
Կունենայ դա յաջող վախճան»։
Ապա դարձաւ զինուորներին.
«Տարէ՛ք սորան կրկին բանտը,
Ես վստահ եմ, որ ձեր ձեռին
Ապահով է այս աւանդը,

Լաւ հսկեցէք մինչ առաւօտ,
Մարդ չթողնէք գայ սրա մօտ,
Յետոյ առանց կապանքների,
Դուք էլ առանց ձեր զէնքերի,
Ծպտեալ կերպով տարէք ձեզ հետ
Եկեղեցի և ուշ դարձրէք.
Ում որ ցոյց տայ, իսկոյն և եթ
Բռնեցէք և ինձ մօտ բերէք»։

Հետևեալ օրն էր կիրակի.
Եկեղեցում պատարագի
Կատարվում էր սուրբ խորհուրդը,
Աղօթում էր ժողովուրդը։
Այնտեղ էր և մեր Եսային,
Կանգնած մի կողմը պատի մօտ,
Եւ նորա շուրջ կանգնած էին
Պահապաններն հեռու ու մօտ.
Հսկում էին նորա վերայ,
Որ մի գուցէ թէ փախչի նա.
Իսկ նա դիտում ժամորներին,
Թէ մատաղհաս, թէ ծերերին։
Այդ միջոցին տեսաւ նա անդ,
Սուրբ պատկերի առաջ չոքած,

Մէկն աղօթում էր ջերմեռանդ,
Երևի էր շատ երկիւղած.
Խաչակնքում էր երեսը,
Չէր նայում ոչ դէն, ոչ դէսը,
Սրտի խորքից հառաչում
Եւ բարձրաձայն «մեղայ» կանչում:
Ասայ՝ն կամաց ասաց կողքին
Կանգնող զինուորներից մէկին.
«Ահա գողը, տալիս եմ ցոյց,
Դուրս տար նորան եկեղեցուց»:
Յետոյ տեսաւ մի անկիւնում
Կանգնած երկրորդ աղօթողին,
Որ շարունակ ծունր էր դնում
Ու ճակատը կպցնում հողին.
Ծեծում էր կուրծքը չարաչար,
Մրթմրթում էր «Այսօր անճար»,
Կամ բազուկները տարածած,
Արձանանում էր քարացած:
Ասայ՝ն դարձաւ միւս զինուորին.
«Ահա երկրորդ իմ ընկերը,
Ջուտով նաև մնացածներին
Մէկ մէկ կրտամ ես ձեր ձեռը»:
Մի այլ կողմը նայեց տեսաւ
Մի մարդ բրդոտ, ինչպէս Եսաւ,

Կուչ էր եկել կորագլուխ,
Կարծես ազօթքը սրտաբուխ
Զէր պակասում շրթունքներից։
Եսայ՚ն ասաց մի երրորդին.
«Նա էլ է իմ ընկերներից,
Այն կուչ եկած ազամորդին»։
Այսպէս վեց մարդ կարճ միջոցում
Բռնել տուեց եկեղեցում,
Որոնց տեսնողն անշուշտ կասէր.
Ի՚նչ արդար են ու ժամասէր։

Երկրորդ օրը նոցա տարան,
Ներկայացրին թագաւորին.
Էլ խաչ ասես, աւետարան,
Ողջ սրբերին վկայ բերին,
Թէ ի զուր են ամբաստանուած,
Թէ նոքա զոհ են անասուած
Եւ չար մարդկանց զրպարտանքին,
Թէ անմասն են այն յանցանքին,
Որում նոցա մեղադրում են,
Արժանի չեն անարգանքին,
Որ այժմ նոքա անմեղ կրում են.
Թէ յայտնի են ողջ քաղաքին

Նոքա, իբրև ազնիւ մարդիկ,
Իբրև խաղաղ քաղաքացիք,
Որոնց անուան անբիծ, մաքուր
Ընբէ՛ք կպել չէ կեղտ կամ մուր։

«Լա՛ւ էք ասում», ասաց արքան
Եւ կուտակեց իւր յոնքերը,
«Մեզ կըպարզէ այդ առարկան
Ձեր յանցակիցն ու ընկերը։
Ներս բերէ՛ք այն յանցաւորին»,
Ասաց արքան զինուորներին.
«Տեսնենք այդպէս վստահ ու քաջ
Կըխօսի՞ք դուք նորա առաջ»։
Իսկոյն գնացին երկու զինուոր
Եւ ներս բերին իմ հերոսին,
Գողերի խումբը յանցաւոր
Ապշած նայեց նրա երեսին։
«Առաջ արի, ա՛յ մարդ, և զուտ
Ճշմարտութիւն խօսի՛ր, ոչ սուտ»,
Դարձաւ արքան դէպի Եսայ՝ն.
«Մօտեցէ՛ր, տե՛ս, սոքա՞ են այն
Ձարագործներն ու գողերը,
Որոնք անցեալ գիշեր քեզ հետ

Գանձարանից իմ փողերը
Գողացան ու եղան անհետ։»

—«Այո՛, տէր իմ, այս վեց հոգին
Մասնակից են իմ յանցանքին,»
Պատասխանեց Եսայ՚ն հանդարտ.
Թող ստեն ինձ, թէ են անպարտ։

Գողերը լուռ կանգնած այնտեղ
Մեր Եսայուն էին նայում։
«Գիտեմ, որ այս մարդն է անմեղ,
Ինչի՞ չէ իւր անձը խնայում,»
Մտածում էր ամեն մէկը.
«Միթէ կորցրե՞լ է իւր խելքը։»
Եւ նոցանից գլխաւորը
Դարձաւ գէպի թագաւորը.
«Տէր թագաւոր, ճշմարիտ է,
Մենք գողացանք քո փողերը,
Բայց այս մարդը ինչից գիտէ,
Թէ իրաւ մենք ենք գողերը.
Որովհետև մենք բոլորս էլ
Երբէք սորան չենք էլ տեսել.

Սա մեր ընկերը չէ, արքայ,
Այստեղ ինչ որ մի գաղտնիք կայ։»

«Պարզիր, այ մարդ, այդ գաղտնիքը,»
Գարձաւ արքան դէպի Եսայ՝ն.
«Դու լսում ես, այս մարդիկը
Ուրանում են միանգամայն,
Թէ դու ընկեր ես սոցա հետ։
Բայց ինձ համար էլը լաւ դէտ։
Փոխարէն քո ծառայութեան
Արժանի ես վարձատրութեան։
Այժմ ասա, արդեօք ինչպէս
Ճանաչեցիր դու այս մարդկանց,
Քանի որ դու պատկանում չես
Սոցա խմբին օրինազանց։
Մինթէ տուել է բնութիւնը
Քեզ հազուագիւտ յատկութիւնը,
Որ նայելով մարդու դէմքին,
Թափանցում ես նորա հոգին։»

—«Ոչ, տէր արքայ, դա առանձին
Հազուագիւտ ձիրք է բնատուր,

Որ չէ տուած նուաստս անձին,
Իմ աչքերը չեն այդքան սուր:
Թէ յաջողեց ինձ այս գործը,
Նպաստողն էր կեանքս փորձը.
Թոյլ տուր, տէր իմ, երկու խօսքով
Պարզեմ սուածս օրինակով:
Երեք ամիս հազիւ լինի,
Ինչ որ առայ ինձ ամուսին
Մի օրիորդ առաքինի
Եւ գեղեցիկ, ինչպէս լուսին,
Երբ նա լրացած տասեղապարդ
Երկնքումը ճեմում հանդարտ:
Իւր հօր տանը պարկեշտ սնուած,
Ազօթասէր և երկիւղած:
Ամեն գիշեր ընթրիքից յետ
Կինս գնում էր մի սենեակ,
Եւ առաջ քան քնէր ինձ հետ,
Ազօթում էր այնտեղ մենակ:
—Այդպէս էր և մեր պայմանը.
Նա պահանջեց, որ իմ տանը
Մի առանձին սենեակ տամ նրան
Նորա համար ազօթարան:—
Վայելելով փոխադարձ սէր,
Ապրում էինք մարդ ու կնիկ,

Մեզ տեսնողը անշուշտ կասէր.
Ահա սոքա են երջանիկ։
Սակայն, ափսոս, շատ կարճատև
Էր իմ բաղտը, որովհետև
Համոզուեցայ ես անցեալ օր,
Որ կինս իմ դէմ է յանցաւոր։
Ինձ հաղորդեց իմ դրացին,
Որ գիշերները իմ տանը
Սիրականի հետ առանձին
Տեսնվում է այն անպիտանը։
Եւ գիշերը, երբոր կրկին
Կինս գնաց իւր աղօթքին,
Սենեակի դռանը մօտեցայ
Փայտը ձեռիս ու թագ կացայ։
Ականջ դրի, ներսը լուռ էր,
Կարծես այնտեղ ոչոք չկար,
Դուցէ կնոջս ի զուր էր
Ամբաստանել դրացին իմ չար։
Բայց լռութիւնը շատ չտևեց,
Անմիջապէս նրան հետևեց
Ուրախ ծիծաղ, և բաղտաւոր
Սիրահարները տարփաւոր,
Որոնք չէին սպասում անշուշտ,
Թէ կարող է մէկը լսել

Համբուրելով իրար անկուշտ,
Ըսկսեցին յետոյ խօսել.
Եւ վճռեցին նոքա այնտեղ,
Ուտեցնելով ինձ մահադեղ,
Հասնեն իրանց նպատակին,
Այն է ապրեն իբր այր ու կին։
Փոքրից յետոյ, մին էլ տեսնեմ,
Սենեակի դուռը բացուեցաւ,
Ու շէմքի վրայ ծիծաղագէմ
Ցանցաւոր գոյգն երևեցաւ։
Ինձ տեսնելով, կինս ճչաց
Եւ վայր ընկաւ ուշաթափած.
Իսկ սիրականը դուրս թռաւ
Ու գող շան պէս շտապով փախաւ։
Ես վազեցի նրա ետևից,
Որ շանսատակ անեմ նորան.
Այդ միջոցին բռնեցին ինձ
Զինուորներն ու բանտը տարան։
Այնտեղ մենակ նստած խցում,
Արկածքիս վրայ էի մտածում.
Ինձ համոզեց կնոջս վարքը,
Որ ստով լիքն է աշխարհքը.
Եւ որ նոքա, որոնք իրանց
Ցոյց են տալիս սուրբ, բարեպաշտ,

Հենց նոքա են օրինագանց,
Արդարութեան ոսոխ անհաշտ։
Եւ որ սխալուած չեմ ես, արքայ,
Կարծեմ դորան կասկած չկայ.
Քո առաջն է ապացոյցը։—
Ես վերջացրի, տէր, իմ ցոյցը։»—

«Եւ ես շատ գոհ եմ քեզանից»,
Պատասխանեց թագաւորը,
«Ծառայութիւն մեծ արիր ինձ,
Եւ չի պակսի քեզ իմ շնորհը։
Սա՛, ինչո՞վ կարող եմ ես
Փոխարէնը վարձատրել քեզ։
Խնդրիր վստահ, միամիտ կաց,
Ես քո արքան եմ ողորմած»։

—«Երջանիկ եմ, վեհափառ տէր,»
Ասաց Եսայ՝ն, որ ծառայիդ
Քեզ ծառայել անձնանուէր
Հանդիպեցաւ պատէհ առիթ։
Բայց ոչինչ շնորհ մի առանձին
Չեմ խնդրում, տէր, ես իմ անձին.

Նոյնը կանէր ամեն բարի
Հպատակ, ինչ որ ես արի։
Բայց մի խնդիրք ունիմ, արքայ,
Աղաչում եմ, չանես անտես.
Իմ նենգաւոր ու լիրբ կնկայ
Ձեռից, խնդրեմ, ինձ ազատես։
Ինքը լուծեց անառակը
Իւր վատ վարքով մեր պսակը.
Նա, որ պղծեց, տէր, իմ տունը
Թող չկրէ իմ անունը։

«Քո խնդիրքը չէ հակառակ»,
Ասաց արքան, «մեր օրէնքին,
Կրպատժուի քո անառակ
Կինն համեմատ իւր յանցանքին։
Գնա, ազատ ես նորանից,
Հանիր արտաքս քո տանից,
Եւ թէ ունիս յոժարութիւն,
Տուր երկրորդ ամուսնութիւն»։

—«Ո՛չ, տէր արքայ, Աստուած չանէ,
Երկրորդ անգամ չիմարանամ.

Թէ կին առնելը ինչ բան է,
Այդ վայելքին առայ ես համ.
Էլ չեմ ուզում,» ասաց Եսայ՝ն,
«Կրկին անգամ փորձել ես այն։»—
Գլուխ տուեց ու հեռացաւ.
Ահա առակս էլ վերջացաւ։

ՎԵՐՋԱԲԱՆ։

Վերջացնելով իմ առակը,
Պէտք է խնդրեմ ներողութիւն,
Թէ պատճառեց այս տետրակը,
Իմ ընթերցող, քեզ ձանձրութիւն.
Գուցէ ոմը ծանր է, դանդաղ,
Նիւթը գրաւիչ չէ բաւական,
Յանգը շատ տեղ ընթանում կաղ,
Կամ անտեղի շեղումներ կան,
Որոնցից Հեշտ էր խուսափել,
Թէ վերջերում չէի շտապել։
Ես յոյս ունիմ, թէպէտ և խիստ,
Բայց կրգատես դու ինձ տրգար,

Որովհետև խիղճս է հանգիստ,
Թէպէտ և գրիչս չէ ճարտար։
Եթէ ես էլ գործ ածէի
Հայր Խորէնի «Յանգարանը».
Անպիտի բան կը ստեղծէի,
Որ գարդարէր Թանգարանը.
Ես երգում եմ, իբրև գուսան,
Ինչոր ազգում է ինձ մուսան։
Դորա համար գուցէ երգս
Հնչում իբրև պարկապզուկ
Մի ազային, որին երկս
Հաճելի չէ, որին Թզուկ
Երևում են բոլոր մարդիկ.
Միայն ինքն է մեծ, ինքն է հանճար.
Նրան համոզել զուր կաշխատիք,
Թէ նա մեծ չէ, այլ միայն երկար։
Բայց արգելվում չէ ոչովին
Մեծ համարել ինքնագովին։
Գարնան վարդի երգչի տաղը
Երկարականջը լսելով,
Ասաց. «Մեր տան աքաղաղը
Բարձր է քեզնից երգ հիւսելով։»
Ձենք գարմանում մենք այդ բանին,
Այլ կերպ կարող չէր նա դատել.

Այդպէս յատուկ է անբանին
Ուրիշներին գնահատել։...

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.